

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**35**

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**35**

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**35**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-  
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան  
Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,  
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 35, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ին-տ. Երևան, 2023, 320 էջ (ներդիր 8 էջ):*

**ՄԱՐԴՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՄԱՐԴՊԵՏ ՊԱՇՏՈՆՅԱՆ**

*Բանալի բառեր՝ Մարդպետ, Հայր մարդպետ, մարգպետ, ներքինի, ոստիկան, վերակացու, հավատարիմ, ցեղանուն, գործակալություն, Դրաստամատ, իշխան, Արշակունիներ, Մարգպանական Հայաստան:*

Հայ Արշակունիների թագավորության (66 – 428 թթ.) արքունիքը գործակալությունների մի ամբողջ համակարգ էր, որի կառավարման հիմնական օղակներն էին հազարապետություն, սպարապետություն, մարդպետություն, մարխազություն, թագակալ և թագադիր ասպետություն, մեծ դատավորություն, սենեկապետություն և շահապուծություն գործակալությունները<sup>1</sup>:

Այս գործակալությունների շարքում կարևոր տեղ էր զբաղեցնում մարդպետությունը՝ մարդպետ պաշտոնյայի գլխավորությամբ: Բուն մարդպետ ձևից զատ, այս պաշտոնյայի վերաբերյալ կիրառական են հայր, հայր մարդպետ, հայր իշխան, ներքինի, ներքինի հայր, ոստիկան, հավատարիմ եզրերը: Մարդպետը արքունի գանձերի ու տիրույթների հսկիչն էր, արքունի կանանոցի վերակացուն ու արքայորդիների դաստիարակը: Նա նաև ղեկավարում էր երկրի ներքին կարգն ու կանոնը հսկող գորամասը՝ մարդպետական գունդը<sup>2</sup>:

Թեև մարդպետություն գործակալության վերաբերյալ մատենագրական առկա տեղեկություններն ընդգրկում են հիմնականում Արշակունյաց թագավորության ժամանակահատվածը, բայց ենթադրելի է, որ այն գոյություն է ունեցել նաև ավելի վաղ՝ Արտաշեսյան հարստության օրոք<sup>3</sup>:

Ավելացնենք նաև, որ 428 թ. հետո մինչև V դ. վերջը՝ մարգպանական շրջանում ևս այս գործակալությունը, գործառույթների որոշակի փոփոխություններով հանդերձ պահպանվեց: V դ. վերջից արդեն կիրառվում է առանձին վար-

\* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ք. գ. ք., haykaz1605@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ հունվարի 12, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ մարտի 5, 2023:

\*\* ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ. գ. ք., henry.khachatryan89@gmail.com

<sup>1</sup> Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր. Գիրք առաջին (IV դարի սկիզբ–IX դարի կես), Երևան, 2018, էջ 398–400:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 399:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (Մատենագիրք Հայոց), հ. Բ, Ե դար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 1858: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 829:

չական միավոր արտահայտող Մարդպետական կամ Մարդպետական գունդ<sup>4</sup> (= Սեպհական գունդ = Վասպուրական գունդ) եզրը՝ հիմք ունենալով առավել վաղ շրջանում ձեռական իշխանություն<sup>5</sup> տարածք հանդիսացող Մարդպետականը:

Մատենագրական սուղ տեղեկությունները մարդպետության մասին ու մարդպետ բառի ոչ միանշանակ ընկալումը պատմաբանասիրության մեջ բազմաթիվ տարակարծություններ են առաջացրել: Ստորև ներկայացնում ենք հայ մատենագրության մեջ հիշատակվող մարդպետներին, ապա ըստ գործառույթների՝ անդրադառնում մարդպետություն գործակալությանն ու մարդպետ բառի նշանակությունը:

### Մարդպետները

Ազգաթանգեղոսը միայն մեկ անգամ է հիշատակում մարդպետ պաշտոնյա՝ «Իշխանն մարդպետութեան իշխանութեանն»<sup>6</sup>, կապված Տրդատ Գ Մեծի կողմից Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ձեռնադրության ուղարկելու հետ:

Փավստոս Բուզանդն առաջին անգամ մարդպետ պաշտոնյային հիշատակում է Տիրան Արշակունու (339-350) ժամանակ, որն Աղբիանոսյան տոհմից Շահակին, այլ նախարարների հետ, ուղեկցում էր Կեսարիա՝ ձեռնադրության<sup>7</sup>: Այնուհետև, հաջորդ իսկ գլխում դարձյալ հիշատակում է Հայր մարդպետին, որը Տիրան արքային գրգռելով կոտորել տվեց Ռշտունյաց և Արծրունյաց տոհմերը<sup>8</sup>:

Մարդպետի հաջորդ հիշատակությունը կապված է Արշակ Բ-ի կառավարման հետ, որը Ներսես Մեծին այլ նախարարների հետ ուղեկցում էր Կեսարիա ձեռնադրության<sup>9</sup>: Նույն Արշակի ժամանակ «Եւ էր մարդպետն Հայր այր չար եւ ժանտ բարոյիւք անաւրէն եւ անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետսն: Սա կոտորեաց զամենայն զզգս նախարարացն ի ժամանակս Տիրանայ արքայի. եւ սոյնպէս առ թագավորութեամբն Արշակայ՝ եւս չար քան զառաջինն գործել չար առ ամենայն մարդ»<sup>10</sup>: Այս վերջին հաղորդման հանգամանքների համա-

<sup>4</sup> «Մարդպետական գունդ» էր կոչվում ինչպես այն գորամիավորումը, որը տրվում էր մարդպետին, այնպես էլ հետագայում վարչատարածային այն միավորը, որն ընդգրկում էր Ատրպատականից մինչև Ճվաշ ու Նախնական ընկած տիրույթները՝ նախկին Մարդպետականը:

<sup>5</sup> «Ձեռական» էր կոչվում այն տիրույթը, որը ժամանակավորապես տրվում էր գործակալին իր պաշտոնավարման ընթացքում:

<sup>6</sup> **Ազգաթանգեղոս**, *Պատմութիւն Հայոց*, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1684:

<sup>7</sup> **Փաստոս Բուզանդ**, *Պատմութիւն Հայոց*, «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 301:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 302:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 313:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 339:

տեքստում Մովսես Խորենացին ևս հիշատակում է Հայր մարդպետին<sup>11</sup>: Վերոբերյալներից պարզ է դառնում, որ այստեղ խոսքն այն մարդպետի մասին է, որին նշանակել էր Տիրան արքան և որը նախարարական տոհմերի կործանման պատճառ էր դարձել: Փաստորեն, Շահակին, Ներսես Մեծին ուղեկցողը, ինչպես նաև Արշակ Բ-ի օրոք ևս նախարարակործան քաղաքականություն իրականացնողը, նույն անձն էր: Նրան նետահարելով սպանում է Շավասպ Արծրունին:

Բուզանդի պատմության շարադրանքում հաջորդ մարդպետն այն անձն էր, որն անարգեց Արտագերս ամրոցում ամրացած Փառանձեմ թագուհուն՝ Պապ Արշակունու մորը. «Ապա եկն եմուտ գաղտ ի ներս ի բերդն Հայր մարդպետ ներքինին, եւ թշնամանեաց գտիկինն մեծապէս իբրեւ զբող մի»<sup>12</sup>: Այս մարդպետին սպանում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը: Սրանից հետո՝ «եւ փոխանակ ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն կարգէ զԴգդակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հաւր նորա գամու միտջ լեալ ի նոյն գործ մարդպետութեանն»<sup>13</sup>: Վերջին վկայությունից պարզ է դառնում, որ Արշակ Բ-ի կամ Տիրանի օրոք Դգդակ մարդպետի պաշտոնն է զբաղեցրել, ով նաև երկրորդ անգամ է կարգվում նույն գործակալությանը՝ սպանված հայր մարդպետի փոխարեն: Դգդակ մարդպետն իր դավաճանության համար սպանվում է Պապի հրամանով: Այնուհետև պատմիչը, խոսելով Արշակ Բ-ի Անհուշ բերդում մահվան մասին, հիշատակում է ոմն ներքինի Դրաստամատի. «Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց եւ Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին եւ հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, եւ ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս յերկրին Յոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, եւ բարձ նորա ի վեր քան գամենայն նախարարացն: Եւ քանզի այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ»<sup>14</sup>: Մեջբերված հատվածում ուշադրության է արժանի «հաւատարիմ» բառը, որ հաճախ գործածական է մարդպետների վերաբերյալ և տվյալ պաշտոնյային բնորոշող հիմնական բառերից է: Բուզանդի աշխարհաբար փոխադրության մեջ Ստ. Մալխասյանցը «լեալ էր իշխան տան գաւառին եւ հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին» հատվածը ներկայացրել է հետևյալ կերպ. «Իշխում էր Անգեղտան գավառի վրա, հավատարմությամբ պահում էր

<sup>11</sup> Մովսէս Խորենացի, էջ 2026:

<sup>12</sup> Փաստոս Բուզանդ, էջ 371:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 379:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 387-388:



Անգեղ բերդի գանձերը»<sup>15</sup>: Կարծում ենք՝ այստեղ «իշխան» և «հաւատարիմ» բառերը նույնարժեք են, և «հաւատարիմ»-ը պետք է հասկանալ «ոստիկան» իմաստով: Վերջին բառը իրանական փոխառություն է հայերենում, հմմտ. միջ. պրսկ. *ōstīgān* – «հավատարիմ, վստահելի»<sup>16</sup>: Ինչպես Հր. Աճառյանն է նշում, հայերեն ոստիկան բառի «վերակացու, հրամանատար, իշխան, կուսակալ» իմաստները (հմմտ. եւ վերակացու եւ ոստիկանս)<sup>17</sup> կարելի է բացատրել նրանով, որ հին հայոց մոտ հավատարիմ էին կոչվում թագավորին մոտ բարձրագույն պաշտոնյաները<sup>18</sup>: Հետևաբար վերոնշյալ կոնտեքստում Դրաստամատ ներքինու վերաբերյալ «լեալ էր իշխան տան գաւառին եւ հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին» հատվածը մեր կարծիքով ճիշտ կլինի թարգմանել «արքունապատկան գավառի»<sup>19</sup> իշխանն ու Անգեղտան բերդի գանձերի հավատարիմն (ոստիկանը, տեսուչը, ստուգողը) էր» ձևով<sup>20</sup>: Հատկանշական է, որ Բուզանդն այս կոնտեքստին նախորդող հատվածում նույն Դրաստամատի վերաբերյալ գործածում է ուստիկան և հավատարիմ բառերն արդեն միասին, հմմտ. «եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան եւ մեծի պատուի, եւ անուն Դրաստամատն»<sup>21</sup>: Մի դեպքում հաւատարիմ բառը գործածված է գոյականաբար, մյուս դեպքում՝ ածականաբար<sup>22</sup>: Բուզանդը, թեև Դրաստամատի վերաբերյալ ուղղակիորեն չի կիրառում մարդպետ եզրը, այնուամենայնիվ ներհինի և ոստիկան բառերի գործածումը վերջինիս կապակցությունը փաստում են նրա՝ մարդպետ լինելու հանգամանքը:

<sup>15</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 248:

<sup>16</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Գ, Երևան, 1977, էջ 570:

<sup>17</sup> Փաստոս Բուզանդ, էջ 390:

<sup>18</sup> ՀԱԲ, հ. Գ, էջ 570:

<sup>19</sup> Ն. Գարսոյանը Բուզանդի անգլերեն հրատարակության մեջ իշխան տան գաւառին կապակցությունը թարգմանել է “the prince of royal district” և ծանոթագրության մեջ նշել, որ Ստ. Մալխասյանցի առաջարկած ուղղումը՝ «իշխում էր Անգեղտան գավառի վրա», տեղին չէ, քանի որ Անգեղտան բերդերի արհմնապատկան լինելը հայտնի է, և տուն բառն այստեղ պետք է հասկանալ արհմնիք իմաստով (*The Epic Histories Attributed to P'awstos Buzand*, translation and commentary by Nina G. Garsoïan, Cambridge, 1989, էջ 198, ծան 313):

<sup>20</sup> Հմմտ. *հաւատարիմ վերակացու*, որ, ինչպես Ք. Պատկանովն է նշում, Սասանյան շրջանում գոյություն ունեցած պաշտոնի անվանում է, որ թարգմանվել է հայերեն, բայց նշանակությունը իրեն հայտնի չէ (К. Патканов, *Материалы для армянского словаря*, т. II, СПб., 1884, с. 22):

<sup>21</sup> Փաստոս Բուզանդ, էջ 387:

<sup>22</sup> «Հաւատարիմ»-ը գոյականաբար է գործածված նաև Խորենացու մոտ, հմմտ. «... առ որ առաքեաց ... զԱնան հաւատարիմ իւր՝ ի քաղաքն Բեթբուբին» (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 1896), (տե՛ս նաև ՀԱԲ, հ. Գ, էջ 570):

Պատմիչի վերոնշյալ կոնտեքստի շարունակության մեջ տարակարծությունների տեղիք է տվել նաև հետևյալ հատվածը, հմմտ. «Եւ քանզի այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց, գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ, եւ զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց»<sup>23</sup>: Նախ նկատենք, որ բնագրում կետագրությունը ճիշտ չէ դրված «...որում հայրն կոչէին ներքինեաց, գործ լեալ էր...», որով ստացվել է, թե «որին ներքինիների հայր էին կոչում», այնինչ պետք է լինի «...որում հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր...»<sup>24</sup>: Հիմնվելով «գործակալություն և մարդպետություն» բառերի՝ և շաղկապով տարանջատման վրա, Ստ. Մալխասյանցը տալիս է հետևյալ թարգմանությունը. «Եվ որովհետև այս պաշտոնը և Հայր կոչված մարդպետությունը ներքինիներին էին հանձնվում Արշակունյաց թագավորության ամենահին ժամանակներից»<sup>25</sup>: Թարգմանությունից այն տպավորությունն է ստեղծվում, կարծես այս դրվագում Բուզանդը խոսում է երկու տարբեր գործակալությունների մասին<sup>26</sup>, այնինչ եզակիով դրված ստորոգյալը՝ «գործ լեալ էր», հուշում է, որ խոսքը մեկ պաշտոնի մասին է: Բացի այդ, սա այն հատվածն է, որտեղ Բուզանդը մի ամբողջ գլուխ է հատկացրել Հայոց Արշակ Բ (350-368 թթ.) թագավորի գերեվարման և Անհուշ բերդում նրա մահվան պատմությունը նկարագրելուն և այս համատեքստում մանրամասնորեն պատմում է նաև Արշակի հավատարիմ ներքինի Դրաստամատի ու նրա զբաղեցրած պաշտոնի մասին: Տվյալ հատվածին նախորդող պարբերության մեջ Բուզանդը մանրամասն ներկայացնում է Դրաստամատ ներքինուն՝ նշելով, որ վերջինս Հայոց Տիրան թագավորի և նրա որդու՝ Արշակ թագավորի ժամանակ Անգեղտան գավառի իշխանն էր և նրա իրավասության տակ էին գտնվում Անգեղ բերդը, դրան հարակից արքունական բերդերը, Ծոփաց աշխարհի Բնաբեղ բերդը: Այնուհետև բացատրելով, թե ինչու էր Դրաստամատը Արշակ թագավորի

<sup>23</sup> Փաստոս Բուզանդ, էջ 387-388:

<sup>24</sup> Ճիշտ կետադրությամբ է տրված Նոր Հայկազյան Բառարանում (Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի (ՆԲՀ), հ. II, Երևան, 1981, էջ 224): Տվյալ հատվածում կետադրության ոչ ճիշտ լինելու մասին է խոսել դեռևս Ն. Բյուզանդացին՝ տալով հետևյալ տարբերակը. «Այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում Հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոց» (Ն. Բիւզանդացի, Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, էջ 268): Ն. Աղոնցն այս կապակցությամբ գրում է. «ներքինեաց գործ լեալ» և ոչ թե «հայրն ներքինեաց» (Ն. Աղոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 499):

<sup>25</sup> Փավստոս Բուզանդ, 1987, էջ 317:

<sup>26</sup> Բ. Հարությունյան, «Մարդպետական և Անգեղտան գործակալություններ Արշակունյաց Հաստատունում», ԼՀԳ, թիվ 4, 1984, էջ 41-49:

հետ գերեվարվել Պարսից երկիր՝ Բուզանդը գրում է. «Քանի որ այս գործակալությունը (այսինքն) մարդպետությունը, որի գլխավորին հայր էին կոչում, ներքինիների գործն էր Արշակունի թագավորության բուն ժամանակներից ի վեր»<sup>27</sup>: Այստեղ ակնհայտորեն խոսքը մեկ անձի և մեկ պաշտոնի մասին է, որտեղ «մարդպետություն» և «հայր» բառերը վերաբերում են գործակալությանը: Ուստի այս և վերոնշյալ փաստերը հաշվի առնելով միանգամայն ավելորդ ենք համարում գործակալություն և մարդպետություն կապակցության մեջ այս բառերի տարանջատումը և առանձին-առանձին մեկնումը: Այստեղ և շաղկապի գործառույթը թվարկելը չէ, այն մեկնողական նշանակություն ունի, այսինքն՝ «գործակալությունը՝ մարդպետությունը»: Այսպիսով, Արշակ Բ-ի օրոք պարզապես մարդպետ էր նշանակվել դեռևս նրա հոր՝ Տիրանի ժամանակներից Անգեղտան իշխան՝ հավատարիմ ներքինի ոստիկան Դրաստամատը:

Հարկ է նաև նշել, որ Անգեղտունն արքունի ոստան էր<sup>28</sup> և «Անգեղտան իշխան» ասելով պետք է հասկանալ ոչ թե ժառանգատեր-սեփականատեր իշխան, այլ թագավորի նշանակած արքունապատկան տիրույթի կառավարիչ<sup>29</sup>: Պարզապես Անգեղտան իշխանի բարձր չէր կարող բոլոր նախարարներից առավել լինել, եթե նա բարձր գործակալության ղեկավար կամ, օրինակ, բդեշխ չէր: Հաջորդ իսկ նախագաստության մեջ Բուզանդը ցույց է տալիս, որ այդ բարձր պաշտոնը մարդպետությունն էր<sup>30</sup>:

Այս Դրաստամատից հետո մարդպետ էր կարգվել Փառանձեմին անարգողը, և դրանից հետո Դղակը երկրորդ անգամ էր նշանակվել նույն պաշտոնին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դղակը երկրորդ անգամ մարդպետ նշանակվելու ժամանակ դավաճանել էր Պապ թագավորին՝ անցնելով Շապուհ II-ի կողմը, բացառված չէ, որ նման մի պատճառաբանությամբ էլ պետք է նաև առաջին պաշտոնավարման ժամանակ հեռացվեր Տիրանի կողմից և փոխարինվեր այլ մարդպետով:

Այնուհետև, մի Հայր մարդպետ հիշատակվում է Ներսես Մեծ կաթողիկոսի ու Պապ թագավորի սպանության ժամանակ<sup>31</sup>:

<sup>27</sup> Այս մոտեցումն է արտահայտել նաև Հ. Մանանդյանը (Հ. Մանանդյան, *Երկեր*, հ. Գ, Երևան, 1981, էջ 239):

<sup>28</sup> Փավստոս Բուզանդ, էջ 390-391:

<sup>29</sup> Ն. Արմնց, նշվ. աշխ., էջ 53:

<sup>30</sup> Հմմտ. Ն. Արմնց, նշվ. աշխ., էջ 500-501, ծան. 2:

<sup>31</sup> Փավստոս Բուզանդ, էջ 393-394, 402:

**Աղյուսակ. մատենագրության մեջ հիշատակված մարդպետներ.**

Մարդպետներ	Թագավորներ	Ում ձեռնով է սպանվել	Սկզբնաղբյուր
Հայր իշխան (անհայտ անվամբ)	Հավանաբար Արտաշես Ա-ի օրոք (Ք. ա. 189 – 160)		Խորենացի
Մարդպետ իշխան (անհայտ անվամբ)	Տրդատ Գ-ի օրոք (298 – 330)		Ագաթանգեղոս
Գլակ (Դգդակ, Դղակ) 1-ին անգամ	Տիրանի օրոք (339 – 350)		Բուզանդ, Ամմիանոս Մարկելինոս
Հայր մարդպետ (անհայտ անվամբ)	Տիրանի և Արշակ Բ-ի օրոք (350 – 368)	Շավասպ Ածուրնու	Բուզանդ, Խորենացի
Դրաստամատ	Արշակ Բ-ի օրոք	Ինֆնասպան է եղել	Բուզանդ
Հայր մարդպետ (անհայտ անվամբ)	Պապի օրոք (370 – 374)	սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի	Բուզանդ
Գլակ 2-րդ անգամ	Պապի օրոք	Պապի հրամանով	Բուզանդ
Հայր մարդպետ (անհայտ անվամբ)	Ներսես Մեծի և Պապի սպանության ժամանակ		Բուզանդ

*Ոստիկան, արքունի կալվածքների (բերդեր, ամրոցներ և այլն) վերակացություն և գանձերի պահպանություն:* Հայր մարդպետի հիմնական գործառույթներից էր Մեծ Հայքի թագավորությունում արքունապատկան տիրույթների վերակացությունը: Բուզանդը, խոսելով Հայր մարդպետի՝ արքունապատկան տիրույթներում մարդպետական տեսչական իրավունքով շրջելու մասին, հայտնում է, որ վերջինս գալիս է նաև Տարոն գավառ՝ այնտեղի արքունապատկան գյուղերը տեսնելու, այսինքն վերակացություն անելու, հմմտ. «Արդ ելանէր սա (Հայր մարդպետը – Հ. Գ., Հ. Խ.) շրջէր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ Հայր մարդպետ ի գաւառն Տարաւնոյ ընդ իւր գեւղսն տեսանել... Եկն էջ եւ

Հայրն մարդպետ զիրով իշխանութեամբն շրջել»<sup>32</sup>: Այստեղ թեև Գ. Ինճիճյանն ու Ն. Բյուզանդացին ենթադրում են, որ «շրջէր ընդ մարդպետութիւնն իւր» և «զիրով իշխանութեամբն շրջել» պետք է հասկանալ այն իմաստով, որ մարդպետների իշխանության տակ գտնվող կալվածքները Տարոնում մարդպետության սեփականությունն էին, սակայն Հ. Մանանդյանը, համաձայնվելով Ա. Գարագաշյանին և Յ. Մարկվարտին, իրավացիորեն ցույց է տալիս, որ հիշյալ կալվածքները լինելով արքունապատկան՝ գտնվել են մարդպետի տեսչության տակ՝ «ընդ տեսչութեամբ մարդպետաց»<sup>33</sup>: Հետևաբար՝ «ընդ մարդպետութիւնն իւր» և «զիրով իշխանութեամբն շրջել» կապակցություններում պետք է հասկանալ մարդպետի ո՛չ թե տանտիրական, այլ գործակալական իշխանությունը<sup>34</sup>:

Հարկ է նշել, որ մարդպետի տնօրինությունը հանձնված տիրույթների մեջ առանձնանում էր Ատրպատականից մինչև Ճվաշ և Նախճավան<sup>35</sup> տարածվող վարչամիավորը՝ Մարդպետականը<sup>36</sup>, որը մարդպետներին էր հանձնվում ձեռական իշխանության իրավունքով: Բացի այդ, մարդպետի իշխանությունն էր հանձնվում մոտ 15 հազարանոց զորք, որը կոչվում էր Մարդպետական գունդ<sup>37</sup>:

**Հայր պատվանունը (Հայրություն):** Հայ պատմիչները մարդպետներին կոչում են Հայր: Տվյալ պարագայում սա ո՛չ անձնանուն է, ո՛չ էլ պետք է հասկանալ «զավակների արու ծնող» իմաստով: Հայր-ը պատվանուն է, որ կրում էին մարդպետներն ի պաշտոնե, հմմտ. «զԴղակ մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ հայր թագաւորին»<sup>38</sup>:

Մովսես Խորենացին, խոսելով մարդպետության սկզբնավորման մասին

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 339:

<sup>33</sup> Ճիշտ է, Մամիկոնյաններն են հիշատակվում իբրև Տարոնի տերեր, սակայն ամբողջ գավառը չէ, որ պատկանում էր նրանց: Տարոնում տիրույթներ ունեին նաև Պալունի-Ջյունականները, Սկյունիները, Վահևունիները, ինչպես նաև արհունիքը:

<sup>34</sup> Հ. Մանանդյան, *Երկեր*, հ. Դ, էջ 237-238:

<sup>35</sup> **Մովսէս Խորենացի**, էջ 1858:

<sup>36</sup> «Ազգաբանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարբ)», քաղվածություն հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևնդյանի, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. I, Երևան, 2002, էջ 178: Հետագայում Մարդպետականի տիրույթներն ընդլայնվել էին, և այդտեղի եպիսկոպոսը կոչվում էր. «Եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու եւ Մարդպետականի» (**Փովմա Արժունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արժունեաց, «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 158):

<sup>37</sup> **Մովսէս Խորենացի**, էջ 1857-1858, Ա. Յակոբեան, ««Գահնամակ ազատաց եւ տանուտեանց Հայոց» եւ «Զաւրանամակ»», *Բազմավէպ*, 3-4, 2011, էջ 549, **Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն Հայոց*, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2260, Բ. Հարությունյան, «Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Զօրանամակի»», *Վէմ*, թիվ 1, 2012, էջ 28, 41:

<sup>38</sup> **Փաստոս Բուզանդ**, էջ 386:

առասպելական Վաղարշակ արքայի օրոք, այս գործակալության գլխավորին կոչում է Հայր, հմմտ. «Նա (Վաղարշակ արքան՝ Հ. Գ., Հ. Խ.) եւ ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խզել. եւ նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչեւ ցճուռաշ եւ ցՆախճաւան, եւ նահապետութեան ազգին սա մեծարոյ»<sup>39</sup>: Սուչն հատվածում թեև մարդպետ բառի կիրառություն չկա, սակայն պարզ է, որ «Հայր իշխան»-ն այստեղ, անշուշտ, վերաբերում է մարդպետ պաշտոնյային: Նախ այդ մասին է հուշում ներխինի բառի գործածությունը, բացի այդ, Ատրպատականից մինչև Ճվաշ ու Նախճավան, մարդպետական գործակալության տնօրինությունը հանձնված տարածքներ էին: Հաջորդ վկայության մեջ պատմիչը մարդպետ և Հայր բառերը կիրառում է միասին, հմմտ. «Տեսեալ զայս Տիրանայ եւ յոյժ զարհուրեալ՝ առաքէ զմարդպետն կոչեցեալ Հայր, եւ հանդերձ երգմամբ կոչէ առ ինքն զՋաւրայ»<sup>40</sup>:

Մարդպետ պաշտոնյային Հայր պատվանունով է կոչում նաև Փավստոս Բուզանդը, հմմտ., «զՀայր մեծ իշխան մարդպետութեանն»<sup>41</sup>, «եւ էր մարդպետն Հայր այր շար եւ ժանտ բարոյիւք անարէն եւ անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետսն»<sup>42</sup>: Բուզանդի հաղորդած տեղեկությունից, ըստ որի Գլակ մարդպետն ըստ գործի (ի պաշտոնե) էր կոչվում Հայր թագավորի<sup>43</sup>, ակնհայտ է դառնում, որ մարդպետ պաշտոնյային տրված Հայր պատվանունը՝ «թագավորահայր» իմաստով պայմանավորված է վերջինս՝ թագավորի խորհրդական լինելու հանգամանքով և գուցե նրա գործառույթների մեջ էր մտնում նաև թագաժանազների խնամակալությունը, դաստիարակությունը<sup>44</sup>, հմմտ. «եւ զՀայր Մարդպետութեան տանն, որ թագաւորահայրն կոչեն»<sup>45</sup>: Եթե պաշտոնյայի վերաբերյալ կիրառական է Հայր ձևը, ապա գործակալությունը կոչվում է «հայրութիւն», հմմտ. «եւ փոխանակ ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն կարգէ զԴգդակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հարս նորա

<sup>39</sup> Մովսէս Խորենացի, էջ 1858:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 2026:

<sup>41</sup> Փաստոս Բուզանդ, էջ 313:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 339:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 386:

<sup>44</sup> Կ. Քումանովը մարդպետի կրած «Հայր թագաւորի» կոչումը նույնացնում է Grand Chamberlain-ի պաշտոնի հետ, որ արժանի սենեկապետն է՝ փաստորեն, միացնելով մարդպետություն և սենեկապետություն գործակալությունները՝ սենեկապետներին համարելով մարդպետի ենթականեր (C. Toumanoff, *Studies in Christian Caucasian History*, Georgetown University Press, 1963, p. 168-169):

<sup>45</sup> Մեսրոպ Վայնգձորեցի, Պատմութիւն սրբոյն ներսիսի հայոց հայրապետի, «Մատենագիրք Հայոց», Բ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 677:

գամու միտջ լեալ ի նոյն գործ մարդպետութեանն»<sup>46</sup>: «Հայրութեան մարդպետութեանն» ձևին զուգահեռ Բուզանդը կիրառում է նաև «մեծի մարդպետութեանն»<sup>47</sup> ձևը, այսինքն՝ Հայր պետք է հասկանալ նաև «Մեծ» իմաստով պայմանավորված այս պաշտոնյայի՝ արքունիքում զբաղեցրած բարձր դիրքով ու բացառիկ հեղինակությունը:

Այսպիսով, մարդպետների Հայր պատվանունը պետք է հասկանալ «վերակացու, տնօրեն, առաջնորդ, գլուխ, տեր»<sup>48</sup> նշանակությամբ:

**Ներքինի:** Աղբյուրներում Հայր մարդպետ պաշտոնյան հաճախ կոչվում է ներքինի, հմմտ. «Իսկ յորժամ արբեցաւ սխաղակեցաւ, սկսաւ ներքինին խաւսել բանս հպարտս եւ ամբարտաւանս յարբելեաց»<sup>49</sup>, «նետիւ հարկանէր զմէջ ներքինւոյն Հայրի»<sup>50</sup>, «Ապա եկն եմուտ գաղտ ի բերդն Հայր մարդպետ ներքինին...»<sup>51</sup>, «Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան եւ մեծի պատուի, եւ անուն Դրաստամատն»<sup>52</sup>: «Զորանամակ»-ում նշվում է, որ մարդպետը, որպես ներքինի, իրականացնում էր թագուհու (անվտանգության ապահովում) և արքայական գանձերի պահպանություն<sup>53</sup>: «Ներքինի Հայր» կամ «Հայր մարդպետ ներքինի» կապակցությունների առկայությամբ պայմանավորված՝ հաճախ նույնականացվել են մարդպետ և ներքինի բառերը<sup>54</sup>: Աղբյուրներում մարդպետին ներքինի կոչելու հանգամանքը դեռևս այս երկու բառերի հոմանշության փաստ չէ: Մարդպետ-ը վարչական բնույթի եզրույթ է, այսինքն՝ պաշտոնի անվանում է, իսկ ներքինի բառն իմաստային առումով ավելի լայն ընդգրկում ունի: Այն բառացի նշանակում է «ներսին պատկանող», որ կազմված է հայերեն ներքին բառից՝ ի < իկ մասնիկով, ինչպես իրանական լեզուներում է, հմմտ. սողդերեն 'ntryk (antarika)<sup>55</sup>, բառացի՝ ներքինի > ներքինի: Բառի կազմությունն իսկ վկայում է նրա ընդհանուր նշանակության մասին, որ կարող է վերաբերել արքունական պալատի տարբեր պաշտոնյաների կամ սպասավորների: Բուզանդը

<sup>46</sup> Փաստոս Բուզանդ, էջ 379:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 302:

<sup>48</sup> Տե՛ս նաև՝ նթՂ, և. II, Երևան, 1981, էջ 52:

<sup>49</sup> Փաստոս Բուզանդ, էջ 339:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 340:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 371:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 387:

<sup>53</sup> Ա. Յակոբեան, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ», էջ 549:

<sup>54</sup> Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, և. 3, Երևան, 1944, էջ 277, է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 979, Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, և. Ա, Երևան, 2000, էջ 157:

<sup>55</sup> ՀԱԲ, և. Գ, Երևան, 1977, էջ 447:

հիշատակում է սենեկապետ Ներսեսին, որը մինչև Հայոց կաթողիկոս դառնալը, զբաղվում էր արքունիքի ներքին և արտաքին գործերով. «ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեան, ի գործակալութեան սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն ի ներքոյ եւ արտաքոյ»<sup>56</sup>: Բուզանդը ներքինի եզրը կիրառում է նաև հոգևորական եպիսկոպոսի վերաբերյալ, հմմտ. «Սոյնպէս Զորթ այր ներքինի ընդ նոսին. քանզի էին ի ներքնի հայրապետին ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր, գործակիցք եւ խորհրդակիցք»<sup>57</sup>: Սա այն դրվագն է, որտեղ պատմիչը խոսում է Փապստոս և Զորթ եպիսկոպոսների մասին, որոնց Ներսես կաթողիկոսի ժամանակ հանձնված էր աղքատանոցների տեսչությունը: Այս հաղորդումից Ստ. Մալխասյանցը նկատել է, որ խոսքը ոչ թե կուրտ ներքինու, այլ ներքին խորհրդականի մասին է, քանի որ եկեղեցական կանոններով արգելված էր եպիսկոպոսի ներքինացումը<sup>58</sup> (իմա՝ կրտվելը): Ա. Այվազյանն այս կապակցությամբ եզրակացնում է, որ ներքինի-ն վարչական բնույթի եզրույթ էր և տվյալ պարագայում ուներ ոչ միայն կաթողիկոսի, այլև՝ Հայոց թագավորի «անմիջական խորհրդական» (ближайший советник) նշանակությունը, հմմտ. «Եւ մինչ չեւ նա (Վարազ Շապուհը – Հ. Գ., Հ. Խ.) եկեալ էր, խորհէր արքայն (Տիրանը - Հ. Գ., Հ. Խ.) ընդ իւր ծառայան ներքինիսն սպասաւորսն իւրում սենեկի (արքունիքի-հեղ.)»<sup>59</sup>: Նա իր ուսուերեն աշխատության մեջ «ներքինիսն սպասաւորսն» կապակցությունը չի թարգմանում, այլ պարզապես տառադարձում է (неркунин-спасавор)՝ իբրև առանձին պաշտոնի, տվյալ դեպքում՝ խորհրդականի անվանում<sup>60</sup>:

Ներքինի բառի տարածված մեկնաբանությունն է, սակայն, «արքունի կանանոցի կուրտ պաշտոնյա»<sup>61</sup>, «հարեմի վերակացու» և համապատասխանում է հունարեն *eunoukhos* (անգլ. *eunuch*, ռուս. *евнух*) և եբրայերեն *sārīš*-ին, հմմտ. «յետ սպանանելոյն զԳողողիա որդի Աքիկամայ զարս հօրս պատերազ-

<sup>56</sup> Փաւստոս Բուզանդ, էջ 311:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 419:

<sup>58</sup> Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 403, 446 ծան. 229, տե՛ս նաև *История Армении Фавстоса Бузанда*, перевод с древнеармянского и комментарии М. А. Геворгяна, Ереван, 1953, с. 220, ծան. 80: Եպիսկոպոսների դիտավորյալ ներքինիացումը (կրտվելը) արգելվում էր եկեղեցական կանոններով, տե՛ս Ն. Վ. Մելիք-Փանգեան, *Հայոց եկեղեցական իրաւունքը*, Ա. գիրք, Շոշի, 1903, էջ 95-96, 146:

<sup>59</sup> Փաւստոս Բուզանդ, էջ 305, А. Айвазян, *Армяно-персидская война 449-451 гг. кампании и сражения*, СПб., 2017, էջ 429-430.

<sup>60</sup> А. Айвазян, նշվ. աշխ., с. 430.

<sup>61</sup> ՆՔՀԼ, Բ. II, էջ 422, ՀԱՔ, Բ. Գ, էջ 447:



մօղս, եւ զկանայս եւ զարս եւ զներքինիս» (Երեմիա ԽՍ 16), «Ովգա ներքինի պահապան կանանցն» (Եսթեր Բ 14), «եւ ահաւասիկ այր մի Եթէովպացի, ներքինի հզօր Կանդակայ տիկնոջ Եթէովպացոց, որ էր ի վերայ ամենայն գանձուց նորա» (Գործք Ը 27): Հունարեն ձևը կազմված է *eunē* – «ննջարան, անկողին» բառի և *ekheion* – «պահպանել, հսկել» բայարմատի կցմամբ և բառացի նշանակում է «ննջարանի պահպան», եբրայերեն *sārīš*-ը համարվում է ծագած ակկադական *rab ša rēši* արտահայտությունից, որ նշանակում է «նա, ով [թագավորի] գլխին է»<sup>62</sup>: Ինչպես հայերենի, այնպես էլ եբրայերենի և հունարենի պարագայում բառերը ստուգաբանորեն չեն նշանակում «կրտված, ամորձատված», այսինքն՝ ցույց չեն տալիս անձի ֆիզիկական հատկություն:

Հայտնի չէ մարդպետ պաշտոնյան, որ ներքինի է կոչվում, պետք է ամորձատված լիներ, թե ոչ: Համենայն դեպս, նրա զբաղեցրած բարձր դիրքն ու հեղինակությունը, թագավորի անմիջական խորհրդական լինելու հանգամանքը, որի «բարձն ավելի վեր էր, քան մյուս նախարարներինը», տեսչական լայն իրավունքները թագավորական կալվածքների վրա, Մարդպետական կոչված գնդի հրամանատարությունը և այլն, կարծես չեն խոսում այն մասին, որ նման լայն իրավասություններ ունեցող գործակալության գլխավորը պետք է ամորձատված մեկը լիներ<sup>63</sup>: Մյուս կողմից, սակայն, չի բացառվում նաև, որ մարդպետի պաշտոնը զբաղեցնելու նախապայման լիներ տվյալ անձի կրտվելը: Մարդպետի լայն հնարավորություններն ու թագավորական գաղտնիքներին տիրապետելը կարող էր, այսպես ասած, «սպառնալիք» լինել թագավորի համար, ուստի այդ պաշտոնին հավակնող անձին «հավատարմացնելու» և թագավորական իշխանությունը հավելյալ վտանգներից ապահովագրելու պայման կարող էր լինել ամորձատումբը: Համենայն դեպս կուրտ մարդպետների գոյությունն առավել ընդունելի է պայմանավորել հեթանոսական շրջանով: Քրիստոնեություն ընդունումից հետո այդ հանգամանքը թեև կասկածելի է<sup>64</sup>, բայց ոչ վերջնականապես ժխտելի:

Այս կապակցությամբ հետաքրքրական է հույն պատմիչ Քսենոփոնի ներկա-

<sup>62</sup> *Theological Dictionary of The Old Testament*, edited by **G. J. Botterweck, H. Ringgren, H.-J. Fabry**, vol. XIII, translated from *Theologisches Wörterbuch zum Alten Testament*, English translation © 2004, Wm. B. Eerdmans Publishing Co., 1999, pp. 344-346.

<sup>63</sup> **Ղ. Ինճիճեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, էջ 136-137: Համենայն դեպս, հռոմեական պատմիչ Ամմիանոս Մարկելինուսը, խոսելով Գլակ մարդպետի մասին, նրան կոչում է *spado*, այսինքն՝ կուրտ (այլ տեղում՝ *eunuchus*), որ եղել է կառավարիչ (*praefectus*), (տե՛ս **Ammianus Marcellinus**, with an English Translation by *John C. Rolfe*, in three volumes, vol. III, London, Harvard university press, 1939, p. 78-79).

<sup>64</sup> **Ղ. Ինճիճեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, էջ 136-137:

յացրած հատվածը ներքինիների վերաբերյալ, ըստ որի, կուրտ լինելու հանգամանքը չի խանգարում լինել խիզախ և զբաղեցնել բարձր պաշտոն, ընդհակառակը, դա ավելի մեծացնում է թագավորի անմիջական շրջապատում աշխատող այդ սպասավորների հավատարիմ և անդավաճան լինելու հավանականությունը, հմմտ. «Կյուրտսը չէր ընդունում նաև շատերի այն կարծիքը, թե ներքինիները թուլակամ են լինում: Կենդանիներին դիտելիս նա եզրակացրել էր, օրինակ, թե անսանձ ձիերը կրտվելուց հետո թեև դադարում են խաճնելուց և քացի տալուց, բայց բոլորովին պակաս ռազմունակ չեն դառնում. ցուլերը կրտվելով, թեև կորցնում են իրենց նախկին հատկությունը և համառությունը, սակայն չեն զրկվում իրենց ուժից և աշխատունակությունից. շները ևս կրտվելուց հետո թեև դադարում են տիրոջից հեռու փախչելուց, բայց դրանով բոլորովին չեն անպետքանում պահակության կամ որսի համար: Նույնպես և մարդիկ, սիրտ ցանկությունից զրկվելով, դառնում են ավելի հանգիստ, բայց ոչ առավել անուշադիր հրամաններ կատարելիս, ոչ էլ պակաս հմուտ ձիավորներ կամ պակաս ճարպիկ նիզակավորներ կամ պակաս փառասեր մարդիկ: Ինչ վերաբերում է հավատարիմ լինելուն, ապա բազմիցս նրանք այդ ապացույցել են իրենց տերերի դժբախտության պահերին: ... Իսկ եթե թվում է, թե ներքինիների մարմնական ուժը նվազում է, ապա կովի դաշտում գենքը հավասարեցնում է թուլին և ուժեղին: Այս ամենը նկատի ունենալով, Կյուրտսն իր բոլոր սպասավորներին, սկսած դռնապաններից, ընտրեց ներքինիների»<sup>65</sup>: Հայ իրականության մեջ ներքինու խիզախության ու հավատարմության մի դրվագ էլ ներկայացնում է Բուզանդը: Պատմելով քուշանաց Արշակունի թագավորի և պարսից Շապուհ II արքայից արքայի միջև պատերազմի մասին պատմիչը նշում է, որ Շապուհի զորքերի մեջ էր նաև գերություն տարված Հայոց հեծելազորն ու անգամ Արշակ Բ արքայի ներքինին: Շարունակելով իր միտքը՝ պատմիչը հաղորդում է. «Եւ զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց: Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից: Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաշութիւն այնչափ կռուաւ եւս ի վերայ Շապուհ արքայի, եւ ապրեցոյց զնա ի մահուանէ. եւ բազումս ի Քուշանաց անտի կոտորեաց, եւ զբազում զախոյանից զզուլիս բերէր զառաջեալ»<sup>66</sup>:

Հին Մերձավոր և Միջին Արևելքի տարբեր պետական համակարգերում պատմությունը հայտնի են տարբեր անձինք, ովքեր ազդեցիկ դիրք ու հեղինակություն են ունեցել իրենց արքունիքներում, նույնիսկ դերակատարություն են

<sup>65</sup> Քսենոփոն, *Կյուրոպեդիա*, քաղվածքները Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, էջ 299-300:

<sup>66</sup> Փաստոս Բուզանդ, էջ 388:

ունեցել թագավոր կարգելու հարցում և կոչվում են ներքինի: Որոշ դեպքերում ներքինի կոչվածի կուրտ լինելն ակնհայտ է կոնտեքստից, այլ դեպքերում՝ ոչ: Հատկությունները ներքինի (կուրտ) այդպիսի ազդեցիկ կառավարիչների մասին են վկայում տարբեր աղբյուրներ: Ք. ա. V դարի հույն պատմիչ Կտեսիաս Կնիդացին հիշատակում է Արտոքսարես անունով ներքինուն, ով շատ ազդեցիկ դիրք ուներ Աքեմենյան Պարսկաստանի արքունիքում: Պատմիչի «Պարսկականք»-ի XVIII գրքում պատմվում է Արտաքսերքսես I-ի (Ք. ա. 464-424 թթ.) կողմից Արտոքսարեսին Հայաստան աքսորելու մասին: Նրա մահվանից հետո վերագառնալով աքսորից՝ նա հեծելազորի հրամանատար Արբարիոսի և եգիպտոսի սատրապ Արքսանոսի հետ գահ բարձրացրեց Օքոսին (թեև նրա կամքին հակառակ): Օքոսը դարձավ թագավոր և հայտնի էր նոր անունով Դարես (II)<sup>67</sup>:

Ք. ա. I դարի հույն մատենագիր Դիոդորոս Սիկիլիացին հիշատակում է Աքեմենյան Պարսկաստանում ամենահայտնի ներքինիներից Բագոասին, ով հազարապետ էր (Արտաքսերքսես III-ի օրոք), հմմտ. «...հազարապետ Բագոասը, որը թեպետ և իր հատկություններով ներքինի էր, բայց իր էությունը՝ խորամանկ և ռազմասեր»<sup>68</sup>: Այս Բագոասը թունավորելով սպանում է Արտաքսերքսեսին և նրա բոլոր որդիներին, բացի ամենակրտսերից՝ Արսեսից, որին կարճ ժամանակով գահին է նստեցնում: Ք. ա. 336 թվի ամռանը Արսեսն ու իր բոլոր զավակները սպանվում են Բագոասի ձեռքով: Վերջինս գահին է նստեցնում Դարես III-ին (Աքեմենյան վերջին թագավորին)<sup>69</sup>:

V-VI դդ. բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին հիշատակում է հայազգի նշանավոր զորավար, ներքինի Նարսեսին, հմմտ. «Այս Նարսեսը ներքինի էր, կայսերական գանձապահ, բայց հակառակ իր ներքինի լինելուն, շատ գործունյա էր և խոհեմ: Նրան հետևում էին հինգ հազար զինվոր՝ զնդերի բաժանված»<sup>70</sup>:

<sup>67</sup> Ctesias' *History of Persia, Tales of the Orient*, translated with commentaries by L. Llewellyn-Jones and J. Robson, London and New York: Routledge, 2010, p. 193. Կտեսիասի երկերը չեն պահպանվել: Դրանք մեզ են հասել տարբեր հեղինակների միջնորդությամբ: «Պարսկականք» աշխատության սույն հատվածի փաղաքով կատարել է Բյուզանդիայի պատրիարք Փոստը (IX դ.). տե՛ս առաջաբանը, էջ 19:

<sup>68</sup> Դիոդորոս Սիկիլիացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 14, Հին հունական աղբյուրներ Բ), Երևան, 1985, էջ 78: Այս նույն Բագոասն ակկադական աղբյուրներում կոչվում է ša rēši, որ ինչպես վերը նշեցինք, պալատական բարձր պաշտոնի անվանում է. (տե՛ս A. Kuhrt, *The Persian Empire, A Corpus of Sources from the Achaemenid Period*, London and New York: Routledge, 2010, pp. 425-426).

<sup>69</sup> Տե՛ս, BAGŌAS, <https://iranicaonline.org/articles/bagoas-the-greek-name-of-two-eunuchs-from-the-achaeemenid-period>

<sup>70</sup> Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ

V-VI դդ.-ում ներքինիները տարբեր պաշտոններ են զբաղեցրել Սասանյան արքունիքում: Այս ժամանակաշրջանի հայտնի ներքինիներից է Մահանը, ով հիշատակվում է անձնական ներքինի (*P-tn š'pstn*, հավանաբար պահակապետ կամ թիկնապահ), արժունի խորհրդական (*BB' 'ndlčpty*, հյ. հանդերձապետ) և սնտեսական վերատեսուչ (*w'slws' n srd'l*) պաշտոնանուններով<sup>71</sup>: Ներքինի է կոչվում նաև Սասանյան Խոսրով I Անուշիրվանի (531–579 թթ.) օրոք պալատական հայտնի գործիչ Բոզորգմեհր Բոխթագանը: Նրան վերագրվող պահլավերենով մեզ հասած «*ayādgar ī wuzurg-mihr*» խրատական տեքստում Բոզորգմեհրն իրեն կոչում է արքունի ներքինի դիվանապետ (*dīwānbed*, տարընթեքցմամբ՝ *winārbed* արքունի ննջարանի տեսուչ) և պալատի վերահսկիչ (*dlykpt', darīgbed*)<sup>72</sup>:

Ներքինիների վերաբերյալ ամբողջ այս զուգահեռները փաստում են մի բան. հնում և միջնադարում ներքինիները կարևոր և ազդեցիկ դեր են խաղացել արևելյան տարբեր պետական համակարգերում: Հետևաբար, ինչպես նշեցինք վերևում, հայերեն ներքինի և հունարեն *eunoukhos* բառերը չպետք է հասկանալ լոկ «արքունի կանանոցի կուրտ վերակացու» նեղ կաղապարի սահմաններում<sup>73</sup>: Պետք է զանազանել տարբեր աստիճանակարգերի ներքինիներ: Բարձրաստիճան ներքինիները վարում էին ռազմավարչական տարբեր բարձր պաշտոններ<sup>74</sup>: Ինչպես կարելի է նկատել վերը մեջբերված հատվածներից, ներքինիներ են կոչվում սենեկապետը, հազարապետը, կայսերական գանձապահը, արքունի խորհրդականը, տնտեսական վերատեսուչը, դիվանապետը կամ ննջարանի տեսուչը, պալատի վերահսկիչը: Այս շարքը լրացնենք Հին Կտակարանի տվյալներով, որտեղ եգիպտոսի փարավոնի ներքինիներ են կոչվում դահճապե-

Ա.), Երևան, 1967, էջ 215: Տե՛ս նաև՝ *The Cambridge Ancient History*, edited by **A. Cameron**, vol. XIV, Cambridge University Press, 2008, p. 534.

<sup>71</sup> Э. Хуршудян, «О двух Сасанидских геммах», *Письменные памятники и проблемы истории культуры народов Востока, XXIII годовичная научная сессия ЛО ИВ АН СССР (доклады и сообщения)*, часть I, 1988, сс. 92-95. EUNUCHS - <https://iranicaonline.org/articles/eunuchs>.

<sup>72</sup> **Jamasp ji Dastur Minocher ji Jamasp-Asana**, *Pahlavi Texts (transcription, translation)*, Tehran, 1992, pp. 85, 124, 299.

<sup>73</sup> Տե՛ս նաև՝ **A. L. Oppenheim**, “A note on ša rēši,” *Journal of the Ancient Near Eastern Society*, 5, 1973, pp. 325-334. **Judith A. Lerner**, **Prods Oktor Skjaervo**, “The Seal of a Eunuch in the Sasanian Court,” *Journal of Inner Asian Art and Archaeology*, vol. 1, 2006, pp. 113-118.

<sup>74</sup> Այս մասին տե՛ս նաև՝ **L. Llewellyn-Jones**, *King and Court in Ancient Persia 559 to 331 BCE*, Edinburgh University Press, 2013, pp. 38-40.

տը, տակառապետը<sup>75</sup> և մատակարարը (Մնունդք ԼԷ 36, Խ 2-3)<sup>76</sup>: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև ներֆինի և մարդպետ բառերի հարաբերակցությունը, որտեղ ներֆինի-ն պալատական ներքին սպասավորն է, որ կարող է զուգահեռ գործածվել տարբեր պաշտոնանունների կողքին, իսկ մարդպետ-ն արքունի կարևոր մի գործակալության գլխավորի պաշտոնանունն է:

### Մարդպետ բառը

Հայերեն մարդպետ բառը պատկանում է -պետ բաղադրիչով կազմված այն պաշտոնների անվանումների շարքին, որոնք նշում են կառավարման տարբեր օղակներ: -Պետ հետագաս բաղադրիչն ունեցող այլ անվանումներ են հայերենում իրանականից փոխառյալ հազարապետ, սպարապետ, հանդերձապետ, մոզպետ/մովպետ և այլն: -Պետ բաղադրիչը հասկանալի է և շատ գործածական հայերենում. փոխառված է միջ. պարսկ. \*pet < հին պարսկ. paiti < հ. ե. potl՝ «տեր»՝ ձևից, հմմտ. ժամ. պարսկ. -bad/-bud<sup>77</sup>: Այն ակտիվ կերպով կազմում է ինքնուրույն բարդություններ հայերենում (նաև՝ արդի), ինչպես՝ հայրապետ, խմբապետ, մեծապետ, գյուղապետ, արարողապետ, գլխապետ (գորքի գլուխ, սպարապետ) և այլն: Թերևս համեմատելի է **ռաբ** (սեմական երկբաղաձայն *rʾb* արմատից<sup>78</sup>, տվյալ դեպքում՝ «մեծ, գլխավոր, տեր, առաջնորդ, պետ» նշանակություններով) ձևի հետ, որ գործածվելով պաշտոններ ցույց տվող տարբեր կազմություններում, վերաբերում է գլխավորին, հմմտ. ակկադական *rab ša rēši* (ներքինապետ, մեծ վեզիր), որին, ըստ տարածված մեկնաբանության, հանգում է նաև եբրայական *rab-sārīs*-ը<sup>79</sup>:

Մարդպետ բառի մարդ բաղադրիչը բազմաթիվ քննարկումների տեղիք է տվել, ու թեև դրա ստուգաբանության վերաբերյալ առկա են տարբեր կարծիք-

<sup>75</sup> «Ներքինի տակառապետ»-ի պաշտոն կար նաև Սասանյան արքունիքում: Բուզանդը հիշատակում է Առչակ Բ-ի ornf հինգ հարյուր բյուր գործով Շապուհ Բ-ի կողմից Հայոց աշխարհի վրա ուղարկված շապստան տակառապետին (Փաստոս Բուզանդ, էջ 363): Շապստան կազմված է պահլավերեն šab (գիշեր) և տեղանվանակերտ -stān վերջածանցի կցմամբ (տե՛ս D. N. Mackenzie, *A Concise Pahlavi Dictionary*, London, 1971, p. 78): Տերմինը կարող է վերաբերել ինչպես արքունի կանանցին, այնպես էլ արքունիքի ներֆին հատվածին ընդհանրապես: Տվյալ պարագայում համապատասխանում է հայերեն *ներքինի* բառին:

<sup>76</sup> Այստեղ մեր նպատակը չէ հին աշխարհում ներֆինիներին վստահված պաշտոնների ամբողջական ցանկ ներկայացնելը: Բնականաբար այս շարքը կարող է լրացվել այլ օրինակներով: ՀԱՔ, հ. Կ, Երևան, 1979, էջ 73-74:

<sup>77</sup> *Theological Dictionary of The Old Testament*, pp. 272-276.

<sup>78</sup> Rab-sāris (հյ. Ռափսարիս) Հին Կտակարանի տարբեր մեկնիչների կողմից տակավին հնում թյուրըմբռնվել է և ներկայացվել իբրև անձնանուն. տե՛ս Ռ. Ֆակսնյան, «Աստվածաշնչի հայերեն նոր քարգմանության մեջ օգտագործվող մի շարք ռազմական եզրերի շուրջ», էջմիածին, 2017, է, էջ 33, 36-38:

ներ, բայց վերջնական ընդունված տարբերակ դեռևս չկա<sup>80</sup>: Նոր Հայկազյան Բառարանում մարդպետ բացատրվում է իբրև «պետ կնոջ մարդոյ, կամ մարց պետ, կամ մարգպետ՝ վարժապետ կանանց. այն է ներհինապետ»<sup>81</sup>: Նորայր Բյուզանդացին ստուգաբանում է մարդ = կին, այսինքն՝ կանանց պետ, ներհինապետ, իսկ գործակալությունը՝ մարդպետություն/ներհինապետություն<sup>82</sup>: Այս մեկնաբանությունները, սակայն, բավարար չեն: Մարդպետի գործառույթներն ինչպես տեսանք վերևում, ավելի լայն էին՝ ընդգրկելով վարչատնտեսական, ռազմական, քաղաքական ասպեկտներ: Բացի այդ, «կանանց պետ» նեղ բնորոշումը և «մարդ = կին» մեկնությունն ընդունելի չէ նաև այն պատճառով, որ մարդպետն անմիջականորեն կապված է թագավորի հետ՝ որպես նրա հավատարիմ:

Իրանցի հետազոտող Հասան Ռեզայի Բաղբիդին հայերեն մարդպետ բառի հետ է համեմատել Կրակովի ազգային թանգարանում պահվող Սասանյան ժամանակաշրջանի մի կնիքի վրայի ոչ հստակ ընթեռնելի տիտղոսի անունը՝ առաջարկելով *wyrpty* (*wīrbed*) տարբերակը<sup>83</sup>: Ռ. Գիզելենն այս նույն կնիքի գրվածքը մինչ այդ հարցականով ընթերցել էր *wyn/vēn*, բայց ավելացրել, որ հնարավոր է նաև *šw* տարբերակը<sup>84</sup>: Երկուսն էլ անհասկանալի են:

Քանի որ *wīr* պահլավերենում նշանակում է «մարդ», «հերոս»<sup>85</sup>, ուստի հայերեն մարդպետ բառի մարդ բաղադրիչը պարսկախոս հետազոտողը ևս հավանաբար է բացատրել «տղամարդ», «խիզախ» իմաստներով, այսինքն՝ «տղամարդկանց (խիզախ իմաստով) պետ»: Նա իր ենթադրությունը հիմնավորելու համար այս շարքին է կցել մեկ այլ պաշտոնի անուն՝ *nēwānbed* (պահլավերեն *nēw* –

<sup>80</sup> Հայերեն *մարդպետ* բառի վերաբերյալ ստուգաբանական գրեթե բոլոր մեկնաբանություններն ամփոփված են Վ. Լիվշիցի ու է. Խուշուդյանի համատեղ աշխատանքում: 1988 թվին տպագրված հոդվածում անդրադառնալով տարբեր հեղինակների տեսակետներին՝ գիտնականներն առաջարկում են *մարդպետ* բառի նոր ստուգաբանություն՝ իր. \*(h)mar=(«հաշվել») արմատից: Ըստ այդմ, մարդպետները ի սկզբանե եղել են «ֆինանսային հսկիչներ» կամ «գանձապահներ» (*ՊՔՀ*, 4, 1988, էջ 80): Տարիներ անց, Վ. Լիվշիցը 2010 թվին տպագրած իր նոր աշխատության մեջ, որտեղ քննության է առնում պարթևական անձնանունները, տեղանունները և այլ հատուկ անուններ, անդրադառնալով *մարդպետ* բառին և դրա վերաբերյալ իրենց առաջարկած ստուգաբանությանը, գրում է հետևյալը. «Теперь я понял, что такая этимология ошибочна: производного \*mart- от корня \*mar- не существовало. Происхождение армянского mardpet, парфянского mrtpty остается неясным» (В. Лившиц, *Парфянская ономастика*, СПб., 2010, с. 238):

<sup>81</sup> *ՆՔՀԼ*, հ. II, էջ 224:

<sup>82</sup> Ն. Բիզանդացի, *Կորին վարդապետ եւ նորին թարգմանությունք*, Տփղիս, 1900, էջ 268:

<sup>83</sup> Hassan Rezaei Baghbidi, "On some Sassanian and Arab-Sassanian coins", *Mirror of Heritage (Ayene-ye Miras)*, vol. 9, number 48, p. 76 (պարսկերեն).

<sup>84</sup> R. Gyselen, "Great commander (vuzurg-framadār) and Court Counsellor (dar-andarzbed) in the Sasanian Empire (224-651)," *The Sigillographic Evidence*, 19, Rome, 2008, p. 49.

<sup>85</sup> D. N. Mackenzie, *A Concise Pahlavi Dictionary*, p. 91.

լավ, քաջ)<sup>86</sup>: Պետք է նշել, սակայն, որ *wīrbed* ձևը զուտ տվյալ հետազոտողի ենթադրությունն արդյունքում ստեղծված բառ է: Ամբողջովին պարզ չէ իրավիճակը նաև *nēwānbed*-ի պարագայում: Սասանյան շրջանի որոշ կնիքների վրա ընթերցված այս տիտղոսի հստակ մեկնաբանություն տրված չէ<sup>87</sup>: Ինչևէ, շարունակության մեջ Թեզալի Բաղբիդին գրում է, որ «խիզախների պետ» կամ «քաջերի պետ» պաշտոնը կարող էին կրել այն անձինք, ովքեր ղեկավարում էին հատուկ վարժեցված զորագնդեր՝ արքունական պալատի անվտանգությունը ապահովելու համար<sup>88</sup>: Այստեղ հարց է առաջանում, թե ինչու միևնույն պաշտոնը միևնույն արքունիքում տարբեր անուններ պիտի ունենար. մի դեպքում վիրպետ, մյուս դեպքում մարդպետ, երրորդ դեպքում նիվանպետ: Հաշվի առնելով *wīrbed* և *nēwānbed* ձևերի խիստ կասկածելի ընթերցանությունը, գերծ կմնանք դրանք մարդպետ բառի հետ համեմատելուց:

Ն. Ադոնցը մարդ բառը համեմատել է հունական աղբյուրներից հայտնի իրանական ծագում ունեցող մարդերի (հուն. *Μαρδοι*) ցեղանվան հետ, որոնք բնակեցնում էին Ջագրոսը և քոչվոր ու ավազակաբարո կյանք էին վարում: Գիտնականի կարծիքով այս մարդերից է իր ծագումն առել իշխանական այն տունը, որի ներկայացուցիչը կրում էր մարդպետ, այսինքն՝ մարդերի պետ անունը<sup>89</sup>: «Մարդպետը տոհմական-իշխանական տիտղոս է և ոչ մի առնչություն չունի առհասարակ պաշտոնի հետ: Մարդպետ-իշխանը ըստ պաշտոնի կոչվում էր

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>87</sup> **Sh. Shaked**, “Some legal and administrative terms of the Sasanian period”, *Monumentum H. S. Nyberg II, Acta Iranica* 5, Téhéran-Liège, 1975, pp. 223-225.

<sup>88</sup> **Hassan Rezaei Baghbidi**, “On some Sassanian and Arab-Sassanian coins”, p. 76 (պարսկերեն).

<sup>89</sup> **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 463-464: Ադոնցի այս տեսակետը բավականաչափ տարածում է գտել հայ պատմաբանասիրության մեջ, տես *ՀԱԲ*, հ. Գ, էջ 281, **Բ. Հարությունյան**, «Մարդպետական և Անգեղոսան գործակալություններ Արշակունյաց Հայաստանում», էջ 41-48, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 1, Երևան, 1971, էջ 832-833, **Ա. Ժամկոչյան**, «Մարդպետները և մարդպետական տունը V դարում», *Ավարայրի խորհուրդը*, Երևան, 2003, էջ 24-30, **В. Варданян**, *Очерки истории Васпураканского армянского государства*, Ереван, 2018, с. 26-28: Ն. Մառը նույնպես հյ. *մարդպետ* բառին տալիս է ցեղանվանական հիմք, բայց ոչ թե մարդերին համարելով առանձին ցեղային միավոր, այլ նույնացնելով մարտի հետ: Ըստ նրա, մարտի *māda* ցեղանունը հանգում է *mar* անվանը և ֆանի որ հայերեն *մար* ցեղանունն էլ նույնանում է *մայր* բառի հետ, սպա մայրիշխանության ժամանակաշրջանում այս ցեղերը կազմել են ամորձատված նեոֆինիների հատուկ դաս: Այստեղից էլ ֆոդերի ծագման վերաբերյալ իր «Հաբեթական տեսության» մեջ քուրդ ցեղանունը առաջացած է համարում հայերեն *կուրտ* (ամորձատված) բառից և համեմատում *մարդպետ* (ներֆինպետ) բառի հետ: Ըստ այդմ, *քուրդ/կուրտ*-ը սոցիալ-տնտեսական կազմավորման հատուկ շերտի անվանում է, որի ներկայացուցիչներն իբրև նեոֆիններ՝ մեծ դերակատարություն են ունեցել մայրիշխանության ժամանակաշրջանում (**Н. Мэпп**, *Избранные работы*, т. 5, М.-Л., 1935, с. 487):

Թագավորի հայր, ուստի մարդպետություն և հայրություն գործ են ածվում որպես հոմանիշ հասկացություններ», – գրում է Ադոնցը<sup>90</sup>: Ամենայն հավանականությամբ նման եզրակացության հիմք է դարձել մարդպետության վերաբերյալ հորենացու հետևյալ հաղորդման «ի նոյն ազգէ խզել» կապակցությունը. հմմտ. «նա (Վաղարշակ արքան – Հ. Գ., Հ. Խ.) եւ ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խզել. եւ նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչեւ ցճուռաշ եւ ցՆախճաւան, եւ նահապետութեան ազգին սա մեծարոյ»<sup>91</sup>:

Նախ նշենք, որ աղբյուրներում մարդպետները հիշատակվում են միայն անձնանունով կամ գործակալության անունով Հայր մարդպետ (տվյալ դեպքում անձնանունն անհայտ է), Գլակ (Դղակ, Դզդակ) մարդպետ<sup>92</sup>, և գեթ մեկ անգամ այդ գործակալությունը տնօրինող անձի տոհմանունը չի հիշատակվում, ինչպես օրինակ այլ դեպքերում է՝ սպարապետ Վարդան Մամիկոնյան, հազարապետ Վահան Ամատունի և այլն: Բացի այդ, «Զորանամակ» (III-IV դդ.) և «Գահնամակ» (IV-V դդ.) վավերաթղթերում, որոնցում ներկայացված են ժամանակի հայտնի նախարարական-իշխանական տների ցանկեր, որևէ նախարարական տոհմանուն՝ կապված մարդպետության հետ, հիշատակված չէ<sup>93</sup>: Այստեղից հետևում է, որ մարդպետություն գործակալությունը, որևէ նախարարական տոհմի ժառանգական արտոնությունը չէր, այլ տրվում էր թագավորին առավել մտերիմ կամ վստահելի անձանց<sup>94</sup> (ի դեպ, այս կարգը գործում էր նաև սենեկապետություն և շահապություն գործակալությունների դեպքում): Ուստի մարդպետությունը գործակալության անվանում է, իսկ մարդպետը՝ պաշտոնի: Հայերենում -պետ բաղադրիչն ունեցող վարչական պաշտոնների անվանումներ ցեղանուններից չեն կազմվում: Ցեղանվանական հիմքով տեղանուններ, անձնանուններ, տոհմանուններ, նույնիսկ իմաստային նեղացմամբ հասարակ առարկաների անվանումներ բազմաթիվ են, բայց վարչական պաշտոնի անվանում հայերենում չկա:

Մարդպետ բառի կառուցվածքն ու հնչյունական կազմը հետազոտողների

<sup>90</sup> Ն. Ադոնցը թեև մարդպետությունը համարում է տոհմական-իշխանական տիրույթ և կապում մարդերի անվան հետ, բայց և շարունակության մեջ գրում է. «Թե իրականում ի՞նչ է նշանակում այդ բառաբանությունը, անհայտ է», սպա նշում նրա գործառնությունները (Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 499):

<sup>91</sup> Մովսես Խորենացի, էջ 1858:

<sup>92</sup> Տե՛ս աղյուսակը:

<sup>93</sup> Զորանամակի վերջում նշվում է Մարդպետական գունդը, «որ է ներքինի պահապան ի վերայ թագունույն եւ գանձուցն» (Ա. Յակոբեան, ««Գահնամակ ազատաց եւ տանուտեւանց Հայոց» եւ «Զարսնամակ»», էջ 549):

<sup>94</sup> Ղ. Ինճիճեան, Հնախոսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Կ. երկրորդ, Վենետիկ, 1835, էջ 137:



մի մասին հուշել են այդ բառի՝ հայերենում իրանական փոխառություն լինելու մասին: Իրանական աղբյուրներում, սակայն, բառը լայնորեն վկայված չէ: Մինչ այժմ հայտնի է ընդամենը երկու աղբյուր, որոնցում ուսումնասիրողները կարգացել են այս բառը՝ ընդ որում կարելի է ասել, որ ընթերցանություն համար որոշիչ նշանակություն է ունեցել հայերեն մարդպետ բառը:

Պարթևական մի կնքագրոշմի վրա Վ. Լուկոնինն է ընթերցել *mrtpty* տիտղոս և այն համեմատել հայերեն մարդպետ-ի հետ<sup>95</sup>: Վերջինս հավանական է համարել այն բացատրել ճ. մարտ բառով (իբր փոխառված պարթևերենից կամ միջին պարսկերենից), որի հին պարսկերեն ձևն է *hamarana* – ճակատամարտ<sup>96</sup>, այսինքն՝ մարտի պետ:

Մ. Հարմատտա-Պեկարին Դուրա-Եվրոպոսից գտնված միջին պարսկերենով գրված մի կավե բեկորի վրա, որտեղ նշված են տարբեր պաշտոնների անվանումներ, կարդացել է *mrdpty* բառը և նույնպես այն նույնացրել հայերեն մարդպետ և նաև ասորական *malbed* բառերի հետ: Վերջինս նշել է բառի՝ «ներքինապետ» նշանակությունը՝ հիմնվելով Յ. Հարմատտայի առաջարկած ստուգաբանության վրա<sup>97</sup>: Յ. Հարմատտան մարդպետ բացատրում է իրանական *\*marda-* < *\*marza-* > միջ. իրան. *marz-* (*marzidan/morzidan*) արմատով, որ նշանակում է «մերձենալ, զուգավորվել, սեռական հարաբերություն ունենալ»: Հիմնվելով այն հանգամանքի վրա, որ հայկական աղբյուրներում մարդպետ պաշտոնյան նաև իբրև թե ներքինապետ (*chief of the eunuchs*) է կոչվում<sup>98</sup>:

<sup>95</sup> В. Борисов, В. Луконин, *Сасанидские геммы*, Ленинград, 1963, с. 48: Հարկ է նշել, որ այս կնքագրոշմն առաջին անգամ հրատարակել է է. Հեդգֆելդը՝ *mrtpty* (մարդպետ) բառի փոխարեն կարդալով *SGTsty* (Սողդի սպահբեղ՝ սպարապետ): Ինչևէ, Վ. Լուկոնինի ընթերցած տարբերակն ընդունվել է և դրվել գիտական շրջանառության մեջ:

<sup>96</sup> В. Луконин, «Резной аметист с изображением царицы царик Денак (из собрания государственного Эрмитажа)», *Исследования по истории культуры народов Востока, сборник в честь академика И. А. Орбели*, Москва-Ленинград, 1960, с. 383: Ա. Այվազյանը հակված է ընդունելու *մարդպետ* բառը *մարտ* արմատով բացատրելու՝ Վ. Լուկոնինի առաջարկած տարբերակը: Ըստ նրա, *մարդպետը* ռազմական բնույթի պաշտոնյա էր, որ իմաստաբանորեն կարելի է բացատրել իբրև *մարտիկների պետ* > *մարտկապետ* > *մարտպետ* կամ ուղղակի Վ. Լուկոնինի առաջարկած տարբերակով՝ *մարտի պետ*: Մարդ և *մարտ* բառերում վերջին բաղաձայնների տարբերությունն էլ վերջինս բացատրում է գրաբարյան ձեռագիր տեխստերում այդ տառերի գրության նմանությամբ և շփոթով (տե՛ս Ա. Айвазян, *Армяно-персидская война 449-451 гг. кампании и сражения*, сс. 438 - 457):

<sup>97</sup> M. Harmatta-Pékáry, “The Decipherment of the Pārsik Ostrakon from Dura-Europos and the Problem of the Sāsānian City Organization,” *Atti del convegno internazionale sul tema: La Persia nel medioevo*, Roma, 1971, p. 473.

<sup>98</sup> Պետ է նշել, որ հայկական աղբյուրներում մարդպետի վերաբերյալ ներքինապետ բառ կիրառված չէ: Կիրառված է *ներքինի*, բայց ոչ՝ *ներքինապետ*: Վերջին ձևը հետագա մեկնաբանության արգասիք է՝ իբրև թե ներքինիների պետ (նման. Լ. Հովհաննիսյան, *Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ*, Երևան, 2016, էջ 38):

վերջինս հավանական է համարում մարդպետ < \*marza-pati բացատրել իբրև «սեռական հարաբերությունը վերահսկող անձ, սեռական ակտի վերակացու (overseer of sexual intercourse)», քանի որ ներքինիներին էր վերապահված հարեմի կանանց՝ թագավորի մոտ ուղեկցելու, այնուհետև հարեմ վերադարձնելու ծառայությունը<sup>99</sup>:

Հայերեն մարդպետ բառի վերաբերյալ մի ուսումնասիրության մեջ առաջին անգամ Հ. Բեյլին է, սակայն, իրանական \*marda- բաղադրիչը \*marza- հնչյունական տարբերակի միջոցով բացատրելու փորձ կատարել: Հաշվի առնելով իրանական լեզուներում նկատված բարբառային տարբերակիչ առանձնահատկությունը, համաձայն որի հյուսիսիրանական -z-ն հարավային ճյուղի լեզուներում համապատասխանում է -d- հնչյունին (հմմտ. հին պարսկ. daranya- = Ավեստայի լեզու zaranya՝ «ոսկի», բելուշ. zān- = ժամ. պարսկ. dān- «իմանալ, գիտենալ» և այլն<sup>100</sup>), Հ. Բեյլին ենթադրում է, որ իրանական \*marza- արմատը պետք է ունենար նախնական «պահպանել, հսկել» նշանակությունները: Իրանական լեզուներում \*marz- արմատին հանգող այս նշանակությամբ բառ, սակայն, չի հանդիպում: Հ. Բեյլին իր ենթադրությունը հիմնավորելու համար փնտրում է կողմնակի ապացույցներ: Վերջինս իրանական marz- արմատով է փորձում բացատրել քուշանական marjhaka-ն (կարդա՝ marzaka-) վկայված ներկայիս Պակիստանի Ջալդա շրջանից գտնված քարե բեկորի վրայի խարոշթ-հի<sup>101</sup> գրությունը արձանագրության մեջ՝ արված քուշանական արքա Կանիշկա I-ի (II դարի սկիզբ) օրոք: Marjhaka- տիտղոսի նշանակությունը թեև հայտնի

<sup>99</sup> Հաշվի առնելով իրանական rz/rd < l հնչյունափոխությունը՝ Յ. Հարմատան \*marza-pati ձևին է հանգեցնում նաև սաուրական մի աղբյուրում վկայված malbed բառը, որ Սասանյան մի պաշտոնի անվանում է և նույնպես չի հանդիպում իրանականում (J. Harmatta, “The Great Bactrian Inscription,” *Acta Antiqua*, t. XII, 1964, p. 422-424): Մեկ այլ օտար աղբյուր, որտեղ կասկածելի է մարդպետ բառի ընթերցում, արաբ պատմիչ Յակուբիի (IX դար) «Պատմությունն» է: «Արտաշիր Պապականից սկսող երկրորդ թագավորությունը» բաժնում պատմիչը ներկայացնում է պարսկական արժույթի բարձր պաշտոնյաներին: Սասանյան մի շարք հայտնի պաշտոնյաների կողմին հիշատակվում է նաև դիվանի պետը, որ կոչվում է المرمدار (al-mardmār d) – (Tārīkh al-Ya’qūbī, *al-mujallad al-awwal*, Beyrūt, 2010, էջ 222): Ակնհայտորեն աղավաղված այս տեքստին առաջն հայացքից նման է մարդպետ բառին: Առաջին մասում արաբական al-mard- ձևն է՝ արաբական –ալ հոդով ու մարդ բաղադրիչով, մեջտեղի -mār- բաղադրիչն անհասկանալի է, իսկ վերջին 'd ձևը կարելի է ուղղել bad/bod (պետ), քանի որ արաբական Զ (ա՛յն) տառը բառամիջում հեշտությամբ կարելի է շփոթել -p- ի հետ հատկապես անձանոթ բառերի դեպքում: Ա. Քրիսթենսենը Յակուբիի մոտ հանդիպող այս բառը համեմատել է այլ աղբյուրներում վկայված Īrān-māz'r, Īrān-māzghar ձևերի հետ և հավանական է համարել այն, որ այս բոլոր ձևերում թափված է Īrān Āmārkār պաշտոնյան՝ շահական հաշվապահը – préposé compatible de l'empire (A. Christensen, *L'Iran sous les Sassanides*, 2 éd., Copenhagen, 1944, pp. 524-525):

<sup>100</sup> *Основы Иранского языкознания*, Москва, 1979, с. 99-100.

<sup>101</sup> Ք.ա. III դ. - Ք. հ. IV դ. Կենտրոնական Ասիայում տարածված գրի տեսակ:

չէ, բայց այն բացատրելու համար Հ. Բեյլին դիմում է խոթանասակերենին: «Չամբաստայի գիրք» անունով հայտնի խոթանասակերենով գրված բուզդա-յական տեքստում (գրուծյան ժամանակաշրջանը՝ անհայտ, բայց ենթադրվում է VII դարից ոչ ուշ) վկայված *malysaka-* (կարդա՝ *malzaka-*) տիտղոսը կոնտեքստից մակաբերելով Հ. Բեյլին մեկնաբանում է իբրև «արքունական գանձապահ»: Կոնտեքստը, որում վկայված է բառը, հետևյալն է. *he (the king) has a marzaka-official who sees all the treasures under the earth, who takes them not for himself, but transfers them to the king's treasury*” (Թարգմանությունը՝ Հ. Բեյլիի): Համարելով, որ խոթանասակերեն *marzaka-* պաշտոնյան իր գործառույթներով համապատասխանում է բուզդայական տեքստերից հայտնի թագավորական պալատում բարձր դիրք ունեցող և գանձարանի կառավարիչ հնդկական *grhapati-*ին (տան տեր), իսկ վերջինիս սողդական համարժեքը՝ *’nβ’rzk’k-*ն է՝ վկայված Վիշվանտարա ջատակայի սողդական մի տարբերակում՝ Հ. Բեյլին դիմում է նաև սողդերենին՝ վերոնշյալ բառերին կցելով նաև սողդերեն *\*ambarz-*, որ կարող է հանգել հին իրանական *ham-barz-*ին, իսկ վերջինս էլ՝ *ham-marz-*ին՝ *m > b* հնչյունափոխությամբ: Նոր Կտակարանի սողդերեն տարբերակում երեք հատվածներում (Ղուկաս 1.68, 1.78, Մատթեոս 25.36) գործածված *\*ambarz-* բաղադրիչը պարունակող բայերի հունարեն համարժեքը *ἐπίσκοπτομαι*-ն է, իսկ հայերենն ունի համապատասխանաբար՝ փրկութիւն բերել, այցելել, տեսնել: Թարգմանական այս համարժեքներն ընդհանրացնելով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հունարեն *ἐπίσκοπτομαι*-ին հանգող *ἐπίσκοπος* բառի Աստվածաշնչյան հայերեն համարժեքը ոստիկանն է, խոթանասակերեն *malysaka-* (= *malzaka-*) և քուշանական *marzhaka* (= *marzaka-*) բառերի համար Հ. Բեյլին մակաբերում է «պահպանել, հսկել» իմաստներով «տեսուչ», «վերակացու» (անգլ. “*overseer*”) նշանակություններն ու այդ նույն նշանակություններով բացատրում նաև հայերեն մարդպետ-ը<sup>102</sup>: Հ. Բեյլին իրանական *\*marz-* արմատին է կցում նաև հայերեն մառան բառը և այն ստուգաբանում իբրև «պահպանման սենյակ»՝ վերջին *z/d-*ի անկումով, որից էլ մառանապան՝ «պահպան սենյակի հսկիչ» և մարդպետ ձևը՝ մեկ անգամ վկայված Եղիշեի մոտ<sup>103</sup>:

<sup>102</sup> Հ. Բեյլիի այս մեկնաբանությունը կարծես թե հակված է ընդունելու նաև Լ. Հովհաննիսյանը (Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 39-40): Ավելի վաղ Ֆ. Ժինյուն, հիշատակելով Հ. Բեյլիին, կարծես թե չի մխտում նրա մեկնաբանությունը: Ֆրանսիացի հետազոտողը մարդպետ բառը համեմատում է մարդպան-ի հետ՝ ենթադրելով, որ այս երկու բառերը ստուգաբանորեն պետք է նույն նշանակությունն ունենան: Ըստ նրա, մարդպետը ինչպես և մարդպանը, ռազմական բնույթի պաշտոնյաներ էին (Ph. Gignoux, « Pour une évaluation de la contribution des sources arméniennes à l’histoire sassanide », *Acta Antiqua, Academiae Scientiarum Hungaricae*, Budapest, 1985-1988, pp. 59-61) :

<sup>103</sup> H. Bailey, “Armeno-IndoIranica,” *Transactions of the Philological Society*, 1956, p. 115.

Հետագայում Հ. Բեյլին հրաժարվում է այս շարքին կցել սողդերեն օրինակները և 1976 թ. հրատարակած խոթանասակերենի իր բառարանում *malysaka-* (= *malzaka-*) բառի դիմաց նշելով «Թագավորական գանձապահ» իմաստը՝ այնուամենայնիվ հրաժարվում է այս բառի՝ սողդերեն ‘*ռթ*’*rz* = իր. \**ambarz-* տարբերակի հետ համեմատությունից<sup>104</sup>: Հետևաբար կասկածելի է դառնում նաև հյ. մառան-ը հանգեցնել իրանական ենթադրյալ \**mardan* ձևին, որ գոյություն չունի, հատկապես երբ հայերենում կան մի շարք իրանական փոխառություններ, երբ *-r-* հնչյունը չի հանգում *-rd-*ին (օր.՝ *արոռ*, *ագուռ*, *հոռեան* և այլն)<sup>105</sup>: Ինչ վերաբերում է խոթանասակերեն *malysaka* և քուշանական *marjhaka* ձևերին, ապա դրանց հանգելը «պահպանել» իմաստով ենթադրելի \**marz* արմատին ևս չի հաստատվում<sup>106</sup>:

Մարդպետ բառի վերաբերյալ նշենք հետևյալը: Այն մեկ անգամ է վկայված Եղիշեի մոտ պարսից մի պաշտոնյայի վերաբերյալ, հմմտ. «զՋնիկանն, որ էր մարդպետ արքունի»: Ջնիկանի մասին Եղիշեի մյուս դրվագում կիրառված է մայպետ<sup>107</sup>: Այս նույն պաշտոնյայի մասին գրում է նաև Ղազար Փարպեցին և բոլոր դրվագներում կիրառում մայպետ ձևը<sup>108</sup>: Նշենք, որ Ջնիկան մայպետը պարսից ավագ գործակալ էր, որն արքայից արքա Հազկերտ II-ի հրամանով մովան հանդերձապետի հետ, որպես օգնական էր կարգվել Դենշապուհին: Հ. Բեյլին, գիտակցելով, որ հայկական միջավայրում ինչպես վաղ, այնպես էլ ուշ միջնադարյան շրջանում մարդպետ պաշտոնի անվանում գոյություն չի ունեցել, նշում է, որ սա զուտ իրանական տիտղոս է՝ չնայած նշենք, որ Սասանյանների վարչական համակարգում ևս մարդպետ պաշտոնյա հայտնի չէ: Եղիշեի մոտ մարդպետ ձևի գոյությունը պետք է բացատրել ուշ շրջանի միջամտություններ, որ գուցե առաջացել է մարդպան, մարդպետ և մայպետ ձևերի նմանություններ պայ-

<sup>104</sup> H. Bailey, *Dictionary of Khotan-Saka*, London-New York-Melbourne, 1979, p. 325.

<sup>105</sup> J. Harmatta, նշվ. աշխ., 425:

<sup>106</sup> Ա. Մարիկը բակտրիական  $\mu\alpha\lambda\iota\zeta\omicron$  բառը համեմատում է խոթանասակերեն *malysa-ka-* յի հետ և հաշվի առնելով վերջինիս հին հնդկական *grha-*ի համարժեքն է՝ եզրակացնում է, որ իր. \**marza-* արմատը պետք է ունենա «տուն», նշանակությունը: Հետևաբար հյ. մարդպետ պետք է նշանակի «տան պետ, տան տեր», քանի որ այն ևս հանգում է \**marza-* արմատին (majordome կամ maître de la maison) (A. Maricq, “Inscriptions de Surkh-Kotal. La grande inscription de Kaniska et l’étéo-tokharien, l’ancienne langue de la Bactriane,” *Journal Asiatique*, t. 246, 1958, p. 354): Իր. \**marza-* արմատի «տուն» նշանակությունը, սակայն, նույնպես չի հաստատվում, քանի որ բակտրիական  $\mu\alpha\lambda\iota\zeta\omicron$ -ն հանգում է հին իր. \**dizā-* (բերդ, ամրություն) ձևին և չի կապվում խոթանասակերեն *malysaka-*ի հետ: Այս մասին մանրամասն տե՛ս В. Лившиц, Э. Хуршудян, նշվ. աշխ., էջ 72:

<sup>107</sup> Եղիշե, *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*, «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 710, 734:

<sup>108</sup> Ղազար Փարպեցի, էջ 2283, 2292, 2297:

մանավորված շփոթի հետևանքով<sup>109</sup>: Ուստի, թեև այն ձևով համապատասխանում է հին իրանական ենթադրյալ \*marzapati-ին, բայց տվյալ պարագայում մարդպետ բառի հետ համեմատության համար աղբյուրագիտական ու տեքստաբանական առումով դիտարկելի չէ<sup>110</sup>:

<sup>109</sup> *Մարդպետ* ձևի հիշատակություններ կան Գավիթ Դվնեցու (VII դ.) «Վկայաբանության» ու Քովմա Արծրունու մոտ (տե՛ս Վկայաբանություն Սրբյոն Գափի, «Մոփեթ Հայկական», ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 95, **Քովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիր Հայոց», հ. ԺԱ, էջ 162): Մատթեոս Ուռուխեցու մոտ հանդիպում է «գմարդպետական գունդն» ձևով (**Մատթեոս Ուռուխեցի**, Ժամանակագրություն, Վաղաշապատ, 1898, էջ 3): Նշյալ աղբյուրներում *մարդպետ* բառը շփոթի հետևանք է: Ճիշտ պետք է համարել *մարդպան* ձևը: Բացի այդ մի դրվագից Քովմա Արծրունին կիրառում է միայն *Հայոց մարդպան* և *մարդպանություն* ձևերը, որը տրվում էր Արծրունյաց նախարարներին (**Քովմա Արծրունի և Անանուն**, էջ 245, 255, 259-260, 262, տե՛ս նաև Վկայաբանություն սրբոց իշխանացն Համագասպայ եւ Սահակայ նախարարացն Հայոց ի տանն Արծրունեաց, «Մատենագիր Հայոց», հ. 2, Է դար, Անթիլիսա-կիբանան, 2007, էջ 953): Իհարկե, այս *մարդպանին*, որը, թերևս ռազմական բնույթի պաշտոնյա էր, չպետք է շփոթել Սասանյան շրջանի (428-630-ական թթ.) *մարդպանի* հետ, որը Հայաստանի կառավարիչն էր: Միևնույն ժամանակ նկատենք, որ *Հայոց իշխանը* նույնպես շփոթված է Սասանյան շրջանի *մարդպանի* հետ: Կիրակոս Գանձակեցին և Ստեփաննոս Օրբելյանն, օրինակ, մարդպան են համարում Քեոդորոս Ռշտունուն (639-654 թթ.) (տե՛ս **Կիրակոս Գանձակեցու Պատմութիւն Հայոց**, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 56, Պատմություն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 114), որն իրականում երկրի կառավարիչն էր՝ Հայոց իշխանը: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ արաբական շրջանի *Հայոց իշխանը* լիազորությունների առումով և, ըստ էության, *Հայոց մարդպանի* իրավահաջորդն էր: Սա էլ, ըստ երևույթին, հիմք է տվել Կիրակոս Գանձակեցուն *Հայոց մարդպաններ* համարել իրականում *Հայոց իշխաններ* Համագասպ և Գրիգոր Մամիկոնյաններին, Ներսես Կամսարականին և Աշոտ Բագրատունուն (**Կիրակոս Գանձակեցի**, էջ 62-63, 65, 77):

<sup>110</sup> Ինչ վերաբերում է ժամանակակից հայերեն *մարդպետ* բառին, որ վարչատարածային առանձին միավորի կառավարիչն է, ապա այն առաջացել է պարսկերեն marz (սահման) բառից, որ ներկայիս հայերենում ձեռք է բերել «նահանգ, շրջան» նշանակությունը: Միջնադարում *մարդ* բառը հայերենում չի գործածվել առանձին վարչատարածային միավորի վերաբերությամբ: Եղիշեի մոտ վկայված *մարդպետ* բառի վերաբերյալ Յ. Հարմատանն նշում է, որ թեև տեխտաբանական առումով կասկածելի է այդ բառի վավերականությունը, բայց գոյություն ունենալու դեպքում հնչյունական առումով ավելի հին կլինեք, քան *մարդպետ* ձևը (**J. Harmatta**, նշվ. աշխ., էջ 424): Ա. Մուշեղյանն, ընդհակառակը, հիմնվելով Եղիշեի մոտ մեկ անգամ վկայված *մարդպետ* ձևի վրա, ոչ միայն *մայպետ*-ն է դարձնում *մարդպետ*, այլև *մարդպետ* բառը համարում է *մարդպետ*-ի աղավաղված ձև (**Ա. Մուշեղյան**, *Մովսես Խորենացու դարը*, Երևան, 2007, էջ 233): Ինչ վերաբերում է *մայպետ* բառին, ապա առկա են դրա տարբեր ստուգաբանություններ: Ք. Պատկանովն այն դնում է պարսկերեն mey (գինի) բառից, իբրև «գինու պետ, գինեխմության արարողակարգի պետ» (**К. Патканов**, *Материалы для армянского словаря*, с. 23): Հ. Բելլին բացատրում է իր. \*māyag (էգ, կին) արմատով, այսինքն «կանանց պետ» (**H. Bailey**, “Armeno-IndoIranica”, p. 112): Ընդ որում, այս բացատրությունը համոզիչ է թվում և. Հովհաննիսյանին (**Ա. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 57): Յ. Հարմատանն, *մայպետ*-ը առաջացած է համարում իր. \*maya-pati- ձևից, բայց ոչ թե «կանանց վերակացու, կանանց պետ» նշանակությամբ, այլ՝ «կանանց սեռական հա-

Կարծում ենք՝ որքան էլ հնչյունաբանական առումով «մարդ» < «մարզ» բացատրությունը հնարավոր է և օրինաչափ (համեմատենք տիպաբանորեն նման կազմություն ունեցող վարդպետ/վարդապետ/վարժապետ բառի վարդ/վարժ բաղադրիչի հետ, որ ստուգաբանվում է իր. *warz-/barz* (գործ, աշխատանք) արմատով)<sup>111</sup> իմաստաբանական, առումով՝ մարդպետ բառի ստուգաբանության համար սպառիչ պատասխան չի ներկայացնում: Բացի այդ նկատենք, որ -պետ բառը հիմնականում կցված է անուն խոսքի մասերին (հիմնականում գոյականներ, նաև՝ թվականներ, օրինակ՝ հազար, հարյուր, դերբայական ձևեր՝ արարողապետ) և ոչ բայահիմքերին: Հետևաբար կարծում ենք՝ մարդ բաղադրիչն այս պարագայում պետք է դիտարկել իբրև անուն խոսքի մաս:

Մ. Լերոյը 1960 թ. տպագրված իր հոդվածում անդրադառնալով –պետ բաղադրիչով կազմություններին հայերենում, մարդպետ բառի հետ կապված մերժում է Հ. Բեյլիի առաջարկած ստուգաբանությունը: Նա հակված է մարդպետ բառում տարանջատել մարդ (տղամարդ նշանակությամբ, *homme*) բաղադրիչը՝ այնուամենայնիվ նշելով, որ տվյալ կազմության մեջ բառի նշանակությունը միազնված է և իր համար անհասկանալի<sup>112</sup>: Ըստ էության այս մոտեցումն ավելի ճիշտ ու սխալ է, և պետք չէ ապարդյուն փորձեր անել մարդ բառի համար այլ իմաստներ փնտրելու, մանավանդ որ բառը և՛ հայերենում, և՛ իրանականում ունի նույն՝ «մարդ էակ» նշանակությունը<sup>113</sup>:

Մենք առաջարկում ենք մարդ բառի տակ տվյալ պարագայում տեսնել «թագավոր» իմաստը, չէ՞ որ մարդպետները նաև «թագավորահայր» էին կոչվում<sup>114</sup>, հետևաբար մարդպետ և հայր թագավորին կազմությունները կունենան նույն նշանակությունը: Մարդ և թագավոր հասկացությունների ընդհանրությունն ընկած է կրոնական աշխարհաստեղծման պատմություններում: Աստվածաշնչում Աստված ստեղծում է մարդուն՝ իշխելու համար (Մննդոց, Ա. 26-28), զրադաշտական աշխարհաստեղծման պատմության մեջ մարդու նախատիպը Գայոմարտն է (Ավ. *gaya marətan*, միջ. պարսկ. *Gayōmart/d*, ման. միջ. պարսկ. *Gehmurd*, որտեղ երկրորդ՝ *marətan*, *mart/d*, *murd* բաղադրիչը հայերեն մարդ բառն է, բառացի՝ «մեռնող» կամ «մահկանացու կյանք», *mortal life*), որ Ֆերդուսիի Շահնամեում ներկայացված է որպես առաջին թագավոր<sup>115</sup>:

րաբերոպրունների վերակացու» “overseer of sexual intercourse (of the woman)” իմաստով (J. Harmatta, “The Great Bactrian Inscription”, էջ 422):

<sup>111</sup> E. Benveniste, “Note sur une étymologie du mot Vardapet”, *REArm*, tome IX, Fascicule 1, Paris, 1929, p. 10.

<sup>112</sup> Sté u M. Leroy, “Les composes arméniens en -pet”, *Annuaire de l’Institut de Philologie et d’Histoire Orientales et Slaves*, t. XV, Bruxelles, 1960, pp. 117-118.

<sup>113</sup> ՀԱԲ, հ. Գ, էջ 278, D. N. Mackenzie, *A Concise Pahlavi Dictionary*, p. 54.

<sup>114</sup> Փաստոս Բուզանդ, էջ 386:

<sup>115</sup> <https://www.iranicaonline.org/articles/gayomart-> D. Durkin-Meisterernst, *Dictionary of Manichean Middle Persian and Parthian*, Turnhout: Brepols publishers, 2004, p. 170.

Մարդ և թագավոր հասկացությունների ընդհանրությունն արտացոլված է նաև շումերական LU.GAL գաղափարագրում (շումերոգրամ), որ կազմված է երկու սեպանշաններից LU (մարդ), GAL (մեծ) տառադարձումներով, որ կիրառության մեջ է եղել Ք. ա. III հազարամյակից ընդհուպ մինչև մ. թ. սկիզբ: Ակկադացիներն, օրինակ, գործածելով շումերական LU գաղափարագիրը, այն ընթերցել են *awilum* = մարդ, իսկ GAL նշանը կարդացել են *rabum*, բառացի՝ «մեծ»: Այս երկու նշանները միասին, այսինքն՝ LU.GAL (մեծ մարդ) գործածել են «թագավոր» իմաստով (*sarrum*)<sup>116</sup>: Թագավորին որպես «մեծ մարդ» ներկայացնելու հետաքրքիր մի զուգադիպություն է առկա նաև հայ մատենագրության մեջ: Խորենացին հատուկ անունների՝ իրեն հատուկ մեկնողական մոտեցմամբ Օսրոյենեի Աբգար թագավորի անունը ստուգաբանում է իբրև «ավագ այր», որ հույներն ու ասորիներն իբր թե ուղիղ արտաբերել չկարողանալու պատճառով դարձրել են Աբգար. «Այս, Աբգարոս կոչէր աւագ այր, վասն առաւել հեզուլթեանն եւ իմաստութեանն. որում յետոյ եւ տիքն. զայս ոչ կարելով ուղղախաւսել Յունաց եւ Ասորոց՝ կոչեցին Աբգարոս»<sup>117</sup>: Խորենացու այս մեկնությունը անունների նմանություն վրա կատարված, այսպես կոչված, «ժողովրդական» կամ «կեղծ» ստուգաբանությունների շարքին է դասվում<sup>118</sup>, սակայն չի բացառվում, որ Պատմահոր այս մեկնությունը, որով նա թագավորին (տվյալ դեպքում նրա անձնանունը) ներկայացնում է որպես ավագ այր (երկրի գլխավոր մարդ, առաջին մարդ), որոշակի ազդերսներ ունենա իրականության հետ՝ իր մեջ կրելով պատմական հիշողության նշույլներ:

Ինչ վերաբերում է մարդպետ տերմինին, ապա հայերենում այն հավանաբար սկսել է կիրառվել Ք. ա. II-I դարերից՝ հայ իրականության մեջ արքունական տվյալ գործակալության ներդրման ժամանակներից:

Այսպիսով, մարդպետություն գործակալության և մարդպետ պաշտոնյայի վերաբերյալ մեր կողմից առանձնացված հիմնական դրույթներն են՝

1. Մարդպետություն գործակալությունը որևէ իշխանական տոհմի ժառանգական սեփականությունը չէր, և դրա առաջացումը չի կապվում նաև որևէ ցեղանվան հետ:

2. Պատմագիտության մեջ տարածում գտած այն տեսակետը, որ մարդպետությունը զուգահեռ, Արշակունյաց թագավորության արևմտյան մասում կար

<sup>116</sup> Watson E. Mills, *Mercer Dictionary of the Bible*, Macon, Georgia: Mercer University Press, 1990, p. 975.

<sup>117</sup> Մովսէս Խորենացի, էջ 1890:

<sup>118</sup> Գ. Սարգսյան, «Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսէս Խորենացու Պատմության մեջ», *ՊՔՀ*, 1, 1998, էջ 113: Հ. Հյուբշմանը հայերեն Աբգար տալիս է ասորերեն Abgar անունից, տես Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, Բ. Ա., Երևան, 1942, էջ 5:

համանման գործակալություն, աղբյուրներով չի հաստատվում:

3. Մարդպետների վերաբերյալ կիրառված ներքինի եզրույթը կարելի է հասկանալ գլխավորապես արքունիքի «ներքին գործերի հանձնակատար» իմաստով: Աղբյուրների տվյալներից չի երևում տվյալ պաշտոնյայի կուրտ լինելու կամ չլինելու հանգամանքը: Եթե նախաքրիստոնեական շրջանի համար ներքինիների կուրտ լինելու հանգամանքը մեծ կասկածներ չի առաջացնում, ապա քրիստոնեության ընդունումից հետո միանշանակ պնդելի չէ:

4. Ոստիկան, վերակացու, հավատարիմ եզրերը բնորոշում են մարդպետ պաշտոնյայի տեսչական գործառույթները արքունապատկան տիրույթների վրա:

5. Հայր թագաւորին կոչումը ցույց է տալիս մարդպետների անմիջական ենթակայությունը թագավորին՝ ի հեճուկս տարածված «կանանոցի վերակացու» բնորոշման:

HAYKAZ GEVORGYAN  
HENRIK KHACHATRYAN

#### THE OFFICE OF MARDPETUT'YUN AND THE MARDPET OFFICIAL

**Key words:** *Mardpet, hayr* (father) *mardpet, marzpet, nerkini* (internal, eunuch), *vostikan*, overseer (*verakats' u*), loyal, tribe name, office, Drastamat, prince, Arshakids, Marzpan Armenia.

During the reign of the Armenian Arshakids (66–428), the office of *mardpetut'yun* played an important role in the governing system of the country. The official in charge of this agency, the *mardpet* (in historical sources also mentioned as father, father *mardpet*, father prince, *nerk'ini* (internal, eunuch), *nerk'ini* father, *vostikan*, loyal), was the direct adviser of the king, the overseer of the royal estates, and the manager of the internal affairs of the royal court. A military regiment called *mardpetakan gund* and numbering about fifteen thousand people was at his disposal. The *mardpets* were appointed by the king himself from among the persons most loyal to him. The territories which were given to this office, covered lands from Atrpatakan to Nakhchavan and Chvashrot. In the 5<sup>th</sup>–7<sup>th</sup> centuries, the *mardpetakan gund* (= Sepukhakan = Vaspurakan) was already mentioned as an independent administrative unit.

Despite the fact that the scant information in historical sources about this structure dates to the reign of the Arshakids, nevertheless, presumably, it also existed in the time of the Artashesids. Some passages in the work of Movses Khorenats'i testify to this. After 428 and until the end of the 5<sup>th</sup> century, during the *marzpanate* period,



the office of *mardpetut'yun*, with some functional changes, was preserved. It was ruled by the Artsruni princes. According to the prevailing view, the *mardpetut'yun* was a *nakharar* (princely) clan. Others think that the *mardpets* were *nerk'inapets*, castrated overseers of the royal harem, but a detailed study of the sources does not confirm this: the office was headed by individuals without hereditary right. In historical sources, the word *nerk'inapet* (literally, the head of the internals, eunuchs) is not used in relation to *mardpets*. Instead, the term *nerk'ini* was used, which has a broader meaning than a castrated overseer of the royal harem. In the article, we offer a new interpretation of the term *mardpet*: its origin is associated with the concept of “king’s father”.

АЙКАЗ ГЕВОРГЯН  
ГЕНРИК ХАЧАТРЯН

#### ВЕДОМСТВО МАРДПЕТУТЮН И ДОЛЖНОСТЬ МАРДПЕТА

**Ключевые слова:** Мардпет, хайр (отец) мардпет, марзпет, неркини (внутренний, евнух), востикан, надзиратель, преданный, этнонимы, ведомство, Драстамат, князь, Аршакуни, Марзпанская Армения.

В период царствования армянских Аршакидов (66-428 гг.) в управлении страной важная роль принадлежала ведомству *мардпетутюн* (մարդպետություն). Чиновник, возглавляющий это ведомство – *мардпет* (в исторических источниках упоминается также *хайр* (Отец), *хайр мардпет*, *хайр шихан* (князь), *неркини* (дословно – «внутренний», евнух), *неркини хайр*, *востикан*, *хаватарим* (преданный)) являлся непосредственным советником царя, надзирателем царских имений, руководителем внутренних дел царского двора, а также под его началом находилось примерно пятнадцатитысячное войско, именуемое «Мардпетакан гунд». *Мардпетов* назначал сам царь из числа самых преданных ему лиц. Этому ведомству присваивались территории, именуемые Мардпетакан, которые охватывали земли от Атрпатакана до Нахчавана и Чвашрота. В V-VII вв. Мардпетакан гунд (= Сепухакан = Васпуракан) упоминается уже как самостоятельная административная единица.

Несмотря на то, что скудные историографические сведения об этом ведомстве относятся к периоду правления Аршакидов, тем не менее предположительно оно существовало и во времена Арташесидов. Во всяком случае об этом есть сведения у Мовсеса Хоренаци. После 428 г. и до конца V в., в период

марзпанства ведомство *мардпетутюн*, с некоторыми функциональными изменениями, сохранилось. Оно управлялось родом Арцруни.

Недостаток сведений об этом ведомстве и неоднозначное восприятие слова *мардпет* послужили основанием для разногласий у исследователей. Согласно распространенному мнению, мардпетутюн был *нахарарским* родом, другая точка зрения состоит в том, что мардпеты – это *неркинапеты* и кастрированные надзиратели царского гарема, однако более детальное исследование источников не дает оснований для подобных выводов: это ведомство возглавляли отдельные лица, без права наследования. В источниках по отношению мардпетов слова *неркинапет* (дословно «начальник евнухов») не используется. В их отношении употреблялся термин *неркини*, который имел более широкое значение, нежели кастрированный надзиратель царского гарема. В статье мы предлагаем новую трактовку термина *мардпет*, согласно которой, его происхождение связывается с понятием “отец царя”.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները  
(ժողովման պատմութեան համառօտ ուրուագիծ).....5

### ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ղազար Ջահկեցու «Գիրք աղօթից»-ի 1742-1744 թթ.  
տպագրված տարբերակները .....32

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ներսես Շնորհալու ծննդյան թվականն ըստ  
իւր եղբորորդի Գրիգորի հիշատակարանի .....44

### ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայոց հնագոյն թաղման ծեսերը  
(ըստ ազգածին ավանդության տվյալների).....56

### ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պատեր և պարիսպներ. մասնավորի ու հանրայինի միջև  
սահմանները Կիլիկյան Հայաստանի փառաբային միջավայրում.....68

### ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ինչո՞ւ, ե՞րբ և որքա՞ն են ուսում «Սասնա ծռեր»  
էպոսում ու միջնադարյան գրականության մեջ. սնունդն ու ծեսը .....81

### ՍԱՄՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

Անի փաղափ կործանման մասին թուրքական  
ավանդագրոյցը և դրա հայկական արձատները.....108

### ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Մարդպետություն գործակալությունը և մարդպետ պաշտոնյան.....129

### ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ պատմագրության ուսումնասիրման փաղափական դիտանկյան  
ներածական հարցեր.....158

**ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ՌՈՒՋԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ԺԳ դարում ընդօրինակված  
«Բանի Խմաստասիրաց»-ի շոք տարբեր բնագիր ..... 189

**ԱՐՎԵՍ**

**ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ**

Գրիգոր Նարեկացու տեսիլի պատկերագրությունը  
(Մանրանկարներից մինչև Մխիթարյան  
հայրերի հրատարակությունների փորագրանկարներ) ..... 204

**ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

«Հաղորդությունը» Թորոս սարկավազի և Թորոս Տարոնացու  
մանրանկարներում ..... 216

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, ԳԻԱՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ**

Սանահինի արհայական-իշխանական հանգստարանները  
Ջաֆարյանների տապանատան հնագիտական  
պեղումների համապատկերում ..... 225

**ՄԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ**

Սրվելի վանական համալիրը  
(2021-2022 թթ. պեղումների արդյունքները) ..... 235

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ**

**ԱՐՏԱԿ ՄԱՂԱՅԱՆ**

Արցախի բնակավայրերն ըստ Երուսաղեմի  
ս. Հակոբյանց վանքի նվիրակի հաշվետումարի ..... 252

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ**

Արամ Քերովբեան, *Ջայն Յանապատի. Եկեղեցական  
երաժշտության բարեկարգումը ԺԹ. դարու վերջաւորութեան,*  
Ակն ընկերակցութիւն, Փարիզ, 2017 ..... 271

---

**ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆՆԵՐ**

<b>Տաթևիկ Մանուկյան, Գեվորգ Տեր-Վարդանյան (1951-2023)</b> .....	294
<b>Կարեն Մաթևոսյան, Վարդան Գեվրիկյան (1964-2023)</b> .....	301
<b>Լինա Պիրադովա, Հայդե Բուշնաուզեն (1939-2023)</b> .....	309
 <i>ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ հանդեսի հոդվածների</i> <b>ձևավորմանը վերաբերող պահանջներ</b> .....	311

---

**CONTENTS**
**BIBLIOGRAPHY****Gevorg Ter-Vardanyan**

The Manuscript Collections of Mashtots Matenadaran ..... 5

**Marine Sargsyan**

The Versions of the *Prayer Book* by Ghazar Jahkets'i  
Printed in 1742–1744 ..... 32

**HISTORY AND ETHNOGRAPHY****Karen Matevosyan**

The Date of Birth of Catholicos Nersēs Shnorhali  
according to the Colophon of his Nephew Grigor ..... 44

**Armen Petrosyan**

Funeral Rites of Earliest Armenians  
(According to Ethnogenic Tradition) ..... 56

**Zohrab Gevorgyan**

Walls and Fences: Boundaries between the Private  
and Public in the Urban Environment of Cilician Armenia ..... 68

**Hayk Hambardzumyan**

Why, When and How Much They Eat in the Epic  
"Sasna Tsrer" and in Medieval Literature? Food and Ritual ..... 81

**Samvel Ramazyan**

The Turkish Legend about the Destruction of the  
City of Ani and its Armenian Roots ..... 108

**Haykaz Gevorgyan, Henrik Khachatryan**

The Office of Mardpetut'yun and the Mardpet Official ..... 129

**Ashot Sargsyan**

Introductory Issues Related to the Study of Armenian  
Historiography from the Political Aspect ..... 158

---

**PHILOLOGY**
**Ruzan Poghosyan**

- Four Different Copies of “Sayings of Philosophers”  
from the 13th Century.....189

**ART****Shoghakat Devrikyan**

- Iconography of Grigor Narekats‘i’s Vision  
(From Miniatures to Engravings of Mekhitarists’ Publications).....204

**Lusine Barseghyan**

- Communion of the Apostles in the Miniatures  
of T‘oros the Deacon and T‘oros Taronats‘i.....216

**ARCHAEOLOGY****Arman Nalbandyan, Diana Mirijanyan**

- Sanahin as a Royal and Princely Cemetery.....225

**Meri Safaryan**

- The Monastery Complex of Srvegh (Results of excavations 2021–2022).....235

**PUBLICATION****Artak Maghalyan**

- The Settlements of Artsakh according to the Donation  
Book of the Saint James Monastery of Jerusalem.....252

**BOOK REVIEW****Arusiak Tamrazian**

- Aram Kerobian, *A Voice in the Wilderness. Reform of the Church  
Music in the Late 19th Century*, Paris, 1917.....271

**OBITUARIES**

- Tatevik Manukyan**, Gevorg Ter-Vardanyan (1951-2023).....294

- Karen Matevosyan**, Vardan Devrikyan (1964-2023).....301

- Lina Piradova**, Heide Buschhausen (1939-2023).....309

## СОДЕРЖАНИЕ

### БИБЛИОГРАФИЯ

#### **Геворг Тер-Варданян**

Рукописные собрания Матенадарана им. Маштоца..... 5

#### **Марине Саргсян**

Версии «Молитвенника» Казара Джахкеци,  
напечатанная в 1742-1744 гг. .... 32

### ИСТОРИЯ И ЭТНОГРАФИЯ

#### **Карен Матевосян**

Дата рождения католикоса Нерсеса Шнорали согласно  
памятной записи его племянника Григора..... 44

#### **Армен Петросян**

Похоронные обряды  
древнейших армян (по данным этногонического предания)..... 56

#### **Зограб Геворгян**

Стены и заборы: границы  
между частным и общественным в городской  
среде Киликийской Армении..... 68

#### **Айк Амбарцумян**

Почему, когда и сколько едят в эпосе «Сасунские удалцы»  
и в средневековой литературе? Еда и ритуал..... 81

#### **Самвел Рамазян**

Турецкое предание о разрушении города  
Ани и его армянские корни..... 108

#### **Айказ Геворгян, Генрик Хачатрян**

Ведомство *мардпетутюн*  
и должность *мардпета*..... 129

#### **Ашот Саргсян**

Размышления об изучении армянской  
историографии в политическом аспекте..... 158

### ФИЛОЛОГИЯ

#### **Рузан Погосян**

Четыре разные рукописи  
“Изречений философов” XIII века..... 189



## ИСКУССТВО

### Шогакат Деврикан

Иконография видения Григора Нарекаци  
(от миниатюр до гравюр изданий Мхитаристов)..... 204

### Лусине Барсеган

“Причащение апостолов” в миниатюрах Тороса Дьякона  
и Тороса Таронаци..... 216

## АРХЕОЛОГИЯ

### Арман Налбандян, Диана Мириджанян

Санаин как царская и княжеская усыпальница..... 225

### Мери Сафарян

Монастырский комплекс  
Срвег (результаты раскопок 2021-2022 гг.)..... 235

## ПУБЛИКАЦИЯ

### Артак Магальян

Поселения Арцаха согласно книге пожертвований  
иерусалимского монастыря свв. Иаковов..... 252

## РЕЦЕНЗИЯ

### Арусяк Тамразян

Арам Керобян, *Глас в пустыне. Реформа церковной  
музыки в конце XIX века*, Париж, 2017..... 271

## НЕКРОЛОГИ

Татевик Манукян, Геворг Тер-Варданян (1951-2023)..... 294

Карен Матевосян, Вардан Деврикан (1964-2023)..... 301

Лина Пирадова, Хайде Бушхаузен (1939-2023)..... 309

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 35**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 35**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 35**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ Ներսես Շնորհալի, Մանրուսմունք (Գրիմ), 1352 թ., ՄՄ 591  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Զախսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 20

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի քվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)